ՄԱՐՏԻՆ ՁԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳՈՐԻՍ 2008

Հրատարակվում է Գորիսի պետական համալսարանի
գիտխորհրդի երաշխավորությամբ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ջ 609

Գրախոսներ՝
ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ - իրավաբանական գիտությունների դոկտոր
ՄԱԼԻԿ ԹԵԼՈՒՆՑ - պատմական գիտությունների թեկնածու

ՁԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
Ջ 609 *ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.*
ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ. - *Գորիս: ԳՊՀ հրատարակչություն, 2008.- 72 էջ:*

Աշխատանքը Լեռնահայաստանի հանրապետության և նրա սահմանադրությանը նվիրված գիտական վերլուծություն է, որում նորովի մոտեցումներ են առաջադրվում մեր ժողովրդի պատմության այդ հերոսական շրջանի, պետականության ձևավորման ու գործունեության մի շարք առանցքային հարցերի վերաբերյալ:

Աշխատության մեջ վերլուծվում է Լեռնահայաստանի պետության ստեղծման նախադրյալները, անհրաժեշտությունը, նրա բնույթը, տիպը, պատմական նշանակությունն ու դասերը: Խորությամբ ներկայացվում է Սյունիքի սահմանադրությունը և համեմատություն է անցկացվում ինչպես հայկական, այնպես էլ այլ երկրների սահմանադրությունների հետ:

Նախատեսված է ինչպես գիտական, այնպես էլ ընթերցող լայն հասարակության համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-807-03-4

ԳՊՀ հրատարակչություն - 2008

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հալիձորի բերդ

Մարտին Ձիլֆուղարյանի՝ Լեռնահայաստանի հայկական պետությանը և նրա սահմանադրությանը նվիրված ներկա ուսումնասիրությունը ճիշտ է, փոքրածավալ, բայց, միաժամանակ լուրջ, յուրովի աշխատանք է: Մեր կարծիքով, այն ընթերցողին և այս հարցերն ուսումնասիրող գիտնականներին, պատմաբաններին, իրավաբաններին կօգնի լրջորեն խորհել Նժդեհի գլխավորությամբ ստեղծված Լեռնահայաստանի հայկական յուրատիպ պետության, նրա սահմանադրության և նորօրյա Արցախի Հանրապետության ճակատագրի մասին:

Առաջին անգամ հրապարակվում և վերլուծվում են Համազանգեզուրյան Տաթևի երկու համագումարների, Ինքնավար Սյունիքի և Լեռնահայաստանի հանրապետության, Սյունիքի սահմանադրության վերաբերյալ դեռևս չուսումնասիրված արխիվային որոշ փաստաթղթեր:

Մանրամասն նկարագրվում է Սյունիքի սահմանադրությունը և համեմատություններ անցկացվում ինչպես հայկական մյուս սահմանադրությունների, այնպես էլ այլ երկրների հիմնական օրենքների հետ: Անդրադարձ է կատարվում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրությանը և մյուս իրավական ակտերին:

Երկու խոսք հեղինակի մասին:

Ընթերցողներին տեղեկացնենք, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը ընդունել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին հռչակագիրը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար հիմնադիր հանդիսացող, հիրավի պատմական կարևոր նշանակություն ունեցող այս իրավական հուշարձանը՝ Հռչակագիրը, մշակել և նստաշրջան է ներկայացրել սույն գրքի հեղինակ Մարտին Ձիլֆուղարյանը, որը հենց այդ նպատակով Ղարաբաղ էր գործուղվել ՀՀ կառավարության այն ժամանակվա նախագահի կողմից: Հեղինակը մասնակցելով նստաշրջանի աշխատանքներին, իր բազմաթիվ ելույթներով հիմնավորել է ներկայացված հռչակագրի բովանդակությունը և ընդունման անհրաժեշտությունը:

Նրա կողմից ներկայացվող գիրքը ունի բազմաբնույթ ուղղվածություն, հարուստ բովանդակություն, տոգորված է հայրենասիրությամբ Սյունիքի, Արցախի և ընդհանրապես Հայաստանի անկախության ազատության գաղափարին: Այն իր լեռնաշխարհի սիրով թելադրված, տքնաջան ու խորհրդաստ աշխատանքի արդյունք է:

ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱԼԻԿ ԹԵԼՈՒՆՑ
Պատմական գիտությունների թեկնածու

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն աշխատությունը Նժդեհյան հայկական պետության, ինչպես նաև Սյունյաց սահմանադրության մասին գիտական վերլուծություններից է: Առաջին անգամ ճշտվում և շրջանառության մեջ է դրվում Լեռնահայաստանի հայկական յուրատիպ պետության առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը, իրավաբանորեն վերլուծվում և ներկայացվում է «Սյունյաց սահմանադրությունը»:

1920-1921 թթ. Զանգեզուրում մղված գոյամարտը հայ ժողովրդի հազարամյակների պատմության ամենափայլուն էջերից է, նրա աննկուն կամքի գերակայության արտահայտություններից մեկը: Պոռթկում է ազգային ֆենոմենը, միավորվում են ինքնապաշտպանական բնազդը, ազգի հերոսությունը և անկախ պետականության ինքնորոշման զգացումը, որն առաջնորդվում է այնպիսի մեծ անհատի կողմից, ինչպիսին Գարեգին Նժդեհն էր: Այդ ինքնաբուխ ու ազատատենչ պոռթկումը ռուս-բոլշևիկյան և թուրք-ադրբեջանական միացյալ զորքերի դեմ, որոնք ներխուժել էին Զանգեզուր՝ այն խորհրդային Ադրբեջանին բռնակցելու հաստատակամությամբ, ավարտվեց Զանգեզուրի պաշտպանների փայլուն հաղթանակով: Տարած հաղթանակները պետք էր ամրապնդել ինքնիշխան Զանգեզուրի քաղաքական ու տնտեսական կյանքը վարող պետական կառույցների ստեղծմամբ, արյան գնով ազատագրված լեռնաշխարհի ինքնիշխանությունը մարմնավորել օրենսդրական գործունեությամբ և պետական շինարարությամբ, որին բաժին էր հասնելու պատմական մեծ առաքելություն՝ ի փառս ապագա, նորօրյա Հայաստանի ու Արցախի:

Եվ ստեղծվեց, կայացավ Լեռնահայաստանի ժողովրդավարական հանրապետությունը:

Սույն աշխատության մեջ նպատակ ենք դրել վերլուծել Լեռնահայաստանի պետության ստեղծման նախադրյալները, անհրաժեշտությունը, նրա բնույթը, տիպը, պատմական նշանակությունն ու դասերը: Նշված տեսանկյունից հարց է ծագում. ի՞նչ է իրենից ներկայացնում Լեռնահայաստանը՝ Հայկական ինքնուրույն պետությո՞ւն, Ինքնավար մա՞րզ, տեղական ինքնուրույն իշխանությո՞ւն, թե՞ զինված միավորում: Տաթևի համազանգեզուրյան համագումարի կողմից ընդունված «կառավարության ձևի գծերը» ի՞նչ է՝ համագումարի սովորական որոշո՞ւմ, օրե՞նք, թե՞ սահմանադրություն:

Այս հարցերին պատասխանելու համար կարծ անդրադառնանք, թե ընդհանրապես գիտական միտքը ինչպե՞ս է բնութագրում պետությունը, սահմանադրությունը, որո՞նք են պետության հիմնական հատկանիշները և այս տեսանկյունից մոտենանք Լեռնահայաստանի հարցին:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում գիտական միտքը փորձել է տալ պետության իր բնորոշումը: Օրինակ՝ անտիկ աշխարհում պետությունը, առանց բացառության, ընդգրկում էր հասարակական կյանքի բոլոր կողմերը, այդ պատճառով նրանում մարդն ամբողջությամբ կլանվում էր պետության քաղաքացու կամ հպատակի մեջ:

Արիստոտելը պետությունը բնորոշել է որպես բազմաթիվ համայնքների և գյուղերի միավորում՝ հանուն լավ, կատարյալ կյանքի: Հին հույների մոտ պետությունը համարվում էր քաղաքացիների բոլոր մտավոր և բարոյական շահերի կենտրոնացում: Հռոմում այդ խնդիրը էապես ներկայացվում էր որպես իրավունքի ընդհանուր սկզբունքներով և ընդհանուր շահերով միավորված մարդկանց միություն:

Իրավաբանները **Պետությունը** բնութագրում են որպես «մեկ իշխանության տակ և մեկ տարածքի սահմաններում գտնվող մարդկանց միացում»:

«Որոշակի տարածքում ապրող և հարկադրանքի ու ինքնուրույն գերագույն իշխանության ենթարկվող ազատ մարդկանց միություն և այլն»՝:

Հեղինակները պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի տեսանկյունից հետաքրքիր և հիմնավոր վերլուծության է ենթարկում Ինքնավար Սյունիքի և Լեռնահայաստանի պետության առանձնահատկությունները, հատկանիշները և եզրակացնում.

«Լեռնահայաստանը, ժամանակի հրամայականով և պատմական անցքերի բերումով, մեծ պայքարի ու մաքառումների գնով կազմավորվեց որպես ինքնատիպ հայկական պետություն»:

Մեր հայրենիք ներխուժած հորդաների դեմ ապստամբած և իր անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետությունը, **Սյունիքի ու Լեռնահայաստանի Հանրապետությունների հետ միասին,** Մերձավոր ու Միջին Արևելքի և Ռուսական կայսրության սահմաններում գործող միակ ժողովրդապետությունն էր: Այդ հսկայական տարածքում, հատկապես՝ կոմունիստական խավարաստվյուռ կայսրությունում, 1921 թ. միայն մի օջախ կար, որտեղ վառվում էր ժողովրդավարության, ազատության ու անկախության ջահը. դա Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնահայաստանն էր[2]:

Սա՝ է ռուս և թուրք զինակցության դեմ Զանգեզուրում և Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի ազատամարտի համաշխարհայինպատմական նշանակությունը և հենց այդ ազատամարտի շնորհիվ է, որ թուրք-բոլշևիզմը, ստիպված, հանդուրժեց խորհրդային Հայաստանի գոյությունն իբրև Վրաստանին ու Ադրբեջանին հավասարազոր հանրապետություն[3]:

Փորձել ենք հանգամանալից վերլուծության ենթարկել ներկայիս իրադրությունը, ըստ ամենայնի արժևորել Արցախի գոյամարտի նշանակությունը և միջազգային ռազմաքաղաքական հանրության արձագանքը դրան: Մեծ է Զանգեզուրի երկրամասի ռազմաստրատեգիական նշանակությունը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր:

Զանգեզուրը՝ Արևիք-Մեղրիով հանդերձ, Հայաստանի ելքն է դեպի հարա-

վային արտասահման, չդադարելով սեպ լինել Ադրբեջանի, թրքալեզու արևելքի ու Թուրքիայի միջև: Զանգեզուրի նկատմամբ թշնամական նկրտումները հնչում են մեր օրերում ևս: Սյունիք-Արևիքում Գարեգին Նժդեհի հայրենասեր գործունեության փորձն այսօր նույնպես զգուշացնում ու պարտավորեցնում է[4]:

Հայ ժողովուրդը թանկ է գնահատում ձեռք բերած իր ազգային անկախ պետականությունը, որի համար նա բազում զոհեր է տվել: Համաձայնվելով պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀՀԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանի հետ, նշենք, որ Ազգային պետականության վերականգնման համար վերջին հարյուրամյակում հայ ժողովրդի համառ պայքարն անցել է տարբեր հանգրվաններով, առաջ բերելով անկախ պետականության գոյության հինգ իրողություններ[5].

1) 1915թ. գարնանը Վանի նահանգի հայերի՝ Արամ Մանուկյանի գլխավորած կարճատև անկախությունը՝ հայոց ազգային պետականության վերականգնման առաջին փորձը:

2) 1918թ. մայիսին Հայաստանի Առաջին Հանրապետության հաստատումը՝ 600 տարի առաջ կորսված անկախ հայոց պետականությանն վերականգնումը:

3) 1921թ. ապրիլին Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Լեռնահայաստանի Հանրապետության հռչակումը, որն արձանագրեց հայերի ազգային պետականության կարճատև գոյությունը պատմական Հայաստանի մի սահմանափակ տարածքում՝ Սյունիքում:

4) 1988թ. սկսած դարաբաղյան հզոր շարժման ընթացքում ծնունդ առած Հայաստանի երկրորդ ազգային անկախ Հանրապետությունը, (1991 թ. սեպտեմբերի 21):

5) Նույն շարժման անմիջական արգասիք հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 2):

Հինգ անկախ ազգային պետական կազմավորումներից բացի, վերջին հարյուրամյակում հայ ժողովուրդն ունեցավ նաև կիսանկախ պետականություն՝ հանձինս Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (1920-1991թ.), որը միասնական ԽՍՀՄ պետության մի մասն էր[6]:

Նժդեհի երազած անկախ Հայկական պետությունը՝ միացյալ Սյունիքով, այսօր իրականություն է: Եթե Հայաստանի Առաջին անկախ հանրապետությունը ոգեշնչեց ու պայքարի հանեց Զանգեզուրին, որի շնորհիվ վերջինս մնաց Մայր հայրենիքի կազմում՝ ստեղծելով Լեռնահայաստան, ապա Հայաստանի երկրորդ անկախացումը նոր թափ հաղորդեց Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարին, և ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որն իր շատ գծերով նույնացվում է Լեռնահայաստանի հետ: Լեռնահայաստանի պատմական փորձը փայլուն օրինակ է Արցախի համար:

Հիշենք, որ ազգային ազատագրական պայքարի և Լեռնահայաստանի ստեղծման շնորհիվ Սյունիքը միացավ Հայաստանին, իսկ Արցախը սպասում է: Այո, պատմությունը կարծես կրկնվում է:

***

Վերջին տարիներին Զանգեզուրի գոյամարտի, այդ ժամանակաշրջանի կուսակցությունների և Գարեգին Նժդեհի թողած ժառանգության մասին գրվել են բազմաթիվ լուրջ և հետաքրքիր գործեր, հիշողություններ, հոդվածներ (Ա. Հովհաննիսյան, Ա. Աբրահամյան, Ա. Սիմոնյան, Լ. Ղազախեցյան, Հ. Գրիգորյան, Ս. Քառյան, Ա. Բաղալյան,Հ. Սիմոնյան, Գ. Մանուկյան, Ա. Հարությունյան, Մ. Լալայան, Յու. Հովսեփյան, Ա. Վիրաբյան Ս. Զաքարյան, Ա. Սարգսյան, Ա. Պետրոսյան, Բ. Հովակիմյան, Գ. Ավագյան): Սակայն, Լեռնահայաստանի որպես հայկական պետականության ինքնուրույն միավորի և նրա սահմանադրությունը պատմաբանների, իրավաբանների, քաղաքագետների հատուկ ուշադրությանը չի արժանացել. հին պատմագրության մեջ էլ այն աննկարելի կերպով քիչ է հիշատակվել: Խորհրդային շրջանի պատմաբանները, իրավաբանները, քաղաքագետները, ուսումնասիրողները, հայտնի պատճառներով, չէին կարող օբյեկտիվորեն անդրադառնալ անցողիկ տիպի այդ պետության՝ հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած պատմական դերին[4]:

Սույն աշխատության նպատակն է լրացնել այդ բացը և վերլուծել ինչպես Լեռնահայաստանի, որպես պետություն, ստեղծման նախադրյալները, անհրաժեշտությունը, նրա բնույթը, տիպը, դերն ու պատմական նշանակությունը, այնպես էլ նրա կողմից ընդունված Սյունիքի սահմանադրությունը:

ՄԱՐՏԻՆ ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ

ԳՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

ԻՆՔՆԱՎԱՐ ՍՅՈՒՆԻՔ

Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ, մնալով անկախ, մինչև քաղաքական հնարաւորութիւն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները:

Տաթևի համազանգեզուրյան I համագումար
25 դեկտեմբեր, 1920 թ.

Լեռնահայաստանի նախարարություն

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. «Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարել անկախ պետություն և այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) և Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:
2. Քանի որ նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապետական և ժողովրդավարական, ուստի այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ և ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:
3. Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին հետայսու անվանել նախարարներ:
4. Վարչապետ ընտրել Սպարապետին նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը:

Տաթևի համազանգեզուրյան II համագումար,
26 ապրիլ, 1921թ.

Սյունիքի Հանրապետության պետականության խորհրդանիշները

Անկախության հռչակումից հետո Լեռնահայաստանն ունեցել է իր պետականության խորհրդանիշները՝ օրհներգ-քայլերգը, զինանշանը և եռագույն դրոշը:

Զինանշանը

«Ինքնավար Սյունիքի քայլերգը»

Մեր սարերը անառիկ ու հպարտ,
Մեր որդիք կորովի ու անպարտ,
Խոր ձորերը Սյունիքի ահավոր՝
Շիրիմ են թշնամու դարավոր:
Թշնամին հագարով միշտ մեր դեմ,
Կուրծք-կրծքի մենք կանգնած նրա դեմ:
Չենք դողում, չենք սարսում մենք մահից,
Մեր մահը թեթև թիթեռի թեւից:
Ինքնավար Սյունիքին ցանկանք
Միշտ լինել թշնամու սպառնանք,
Շատ սպրի մեզ համար այսուհետ,
Քաջ հերոս Նժդեհ Սպարապետ:

Սյունիքի քայլերգի տեքստի հեղինակն է Տիգրան Սպանդարյանը (Տաթեւիկ Սպանդարյանի հայրը):

Սյունյաց նախարարության նահապետները թագավորները, գահերեց իշխանները, վարչապետները

Սյունիքի Գրիգոր Ա թագավոր (1051-1072)

Սյունիների (Սիսակյանների) տոհմի հիմնադիրը և առաջին նահապետը համարվում է ՍԻՍԱԿԸ՝ Գեղամի որդին, որի անունով էլ, ըստ ավանդության, կոչվել է Մեծ Հայքի Սիսական Նահանգը (աշխարհը): Այս հարստության սկիզբը մ. թ. ա. 2100 թվականն է:

Ապա հայտնի է ԱՌԱՆ նահապետը, որին, քաղցր բնավորության համար կոչում էին նաև Աղու: Ըստ Մովսես Խորենացու, նրա անունով է կոչվել Աղուանք-Աղվանքը, որի նահապետն էր:

Մ. թ. 150 թվականին Սյունյաց տերն էր Բակուր իշխանը, որը հայ բանահյուսության և քնարերգության մեջ վիպականացվել է մի դիպվածով («Հարճը»): Նրանից հետո պատմագրության մեջ երևում են Պելուժավը (հարցականով) և Վաղինակ իշխանները (332-ից):

Մինչև 363 թվականը Սյունյաց նախարարության նահապետն էր ԱՆԴՈԿ ՍՅՈՒՆԻՆ: Այդ նա էր, որ անսպասելի հարվածով գրոհեց և թալանեց Պարսկաստանի այն ժամանակվա մայրաքաղաք Տիզբոնը: Տասնհինգ տարի ընդմիջումից հետո, իշխանությունը վերցնում է նրա որդի ԲԱԲԻԿԸ, որը իշխում է 21 տարի, այսինքն՝ մինչև 400 թվականը:

Ըստ Ստ. Օրբելյան պատմիչի, այնուհետև մեկ տարի իշխում է պարսիկների դրածո Սամ Գնթունին, ապա 9 տարի՝ ՎԱՂԻՆԱԿ ՍՅՈՒՆԻՆ:

412թ. Սյունյաց նախարար, ապա Հայոց և վրաց մարզպան է նշանակվում ՎԱՍԱԿ ՍՅՈՒՆԻՆ և իշխում 39 տարի (մինչև 451/52 թթ.): Ապա իրար հաջորդում են 28 գահերեց իշխաններ:

Ըստ այն թվերի, որ վավերագրել են Ստ. Օրբելյանը և Հայր Ալիշանը, վերոհիշյալ Սյունիները գահակալել են մինչև 711 թվականը: Այնուհետև, մինչև 800-ական թվականների սկիզբը, երևում են Վասակ, Փիլիպպե, Ատրներսեհ և Փիլիպպե իշխանները: Սրանց բոլորի նստավայրը եղել է Շաղատ մայրաքաղաքը: Դրանից հետո գահանիստը տեղափոխվել է Վայոց Ձոր և սկիզբ դրվել Սյունյաց նոր նահապետների հարստությանը՝ սկսած Վասակ իշխանից, որը վախճանվել է 821թ.:

Այս իշխանական տոհմը շարունակվել է մինչև 976թ., երբ ՍՄԲԱՏ ՍԱՀԱԿՅԱՆ գահերեց իշխանը 987 հռչակել է Սյունիքի (Բաղաց) թագավորությունը

Կապան մայրաքաղաքով, և ինքն էլ դարձել առաջին թագավորը: Սյունիքի թագավորության հոգևոր կենտրոնը դառնում է Տաթևը: 1008 բնակավայր, 43 բերդ և 48 վանք ունեցող Սյունյաց թագավորությունը 1170 թ. դադարում է գոյություն ունենալուց:

XII դարում Սյունիքի իշխաններին՝ Օրբելյաններին և Պռոշյաններին հաջողվել է երկրամասը ազատագրել օտարներից և հաստատել իրենց իշխանությունը: Օրբելյաններն իրենց իշխանությունը պահպանում են մինչև Լենկ-Թեմուրի արշավանքը և 1450-ական թթ. այն վերջնականապես կորցնում:

XVIII դարի սկզբին Սյունիքում բռնկվում է հզոր ազատագրական շարժում Դավիթ-Բեկի գլխավորությամբ: Նրան հաջողվում է թոթափել պարսկական (կաջարների) լուծը և Սյունիքի բնիկ ազգային-պատմական տարածքում իր ձեռքը վերցնել իշխանությունը: Պարսից Թահմազ 2-ը, հարկադրված, 1727 թ. հրովարտակով ճանաչում է Դավիթ-Բեկի իշխանությունը Սյունիքում, որը, փաստացի, երկրամասի ինքնուրույնության ճանաչումն էր:

Դարերը չընկճեցին սյունեցու ոգին. կարծես պատմությունը կրկնվեց և շուրջ երկու դար անց սյունեցին նորից պայքարով նվաճեց իր անկախությունը:

1921 թ. ապրիլի 26-ին Տաթևում կայացավ համազանգեզուրյան 2-րդ համագումարը, ուր երկրամասը հայտարարվեց Լեռնահայաստան և ստեղծվեց կառավարություն Գարեգին Նժդեհի գլխավորությամբ: Զանգեզուրի 1920-21թթ. գոյամարտի շնորհիվ Սյունիքը մնաց Սովետական Հայաստանի կազմում, որի համար պարտական ենք Գարեգին Նժդեհին:

1996 թ. հունվարի 1-ին կազմավորվում է Սյունիքի մարզը՝ ներառելով Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու նախկին վարչական շրջանների տարածքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՐՊԱՍ

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում կոչվել է տարբեր անուններով՝ Սյունիք, Սիսական, Զանգեզուր:

Սյունիքը հայ ժողովրդի պատմության մեջ բացառիկ կարևոր դեր կատարած երկրամասերից է: Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մասում գտնվող Սյունյաց աշխարհը հյուսիսից սահմանակից է Գուգարքին, հյուսիս-արևելքից՝ Ուտիքին, արևելքից՝ Արցախին, հարավից՝ Վասպուրականին, Արաքս գետով անջատվում է Ատրպատականից, իսկ արևմուտքից սահմանակից է Այրարատ աշխարհին: Սյունիքը լեռնային երկիր է: Այստեղ են գտնվում մի քանի մեծ ու փոքր լեռնաշղթաներ, որոնցից են Վարդենիսի, Վայոց Ձորի, Զանգեզուրի, Բարգուշատի և Արևիքի լեռնաշղթաները: Այս լեռնաշղթաները միաժամանակ օտար նվաճողների դեմ բնական պատնեշ են հանդիսացել: Երկիրն ասպատակողներից պաշտպանվելու համար սյունեցիները կառուցել են մի քանի տասնյակ բերդեր ու ամրոցներ: Միայն Սյունյաց թագավորությունը՝ (970-1170թթ.), որի մեջ մտնում էին պատմական Սյունիքի 12 գավառներից 6-ը, ուներ 43 բերդ:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*

Սյունիքի մարզը կազմավորվել է 1996 թ. հունվարի 1-ին՝ ներառելով Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու նախկին վարչական շրջանների տարածքները: Մարզկենտրոնը Կապան քաղաքն է: Մարզի տարածքը 4506 քառ. կմ է, բնակչությունը՝ 164,1 հազար մարդ:

Սյունիքի մարզն զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավարևելյան հատվածը: Զբաղեցնում է ՀՀ տարածքի 15 %-ը: Գեղարքունիքի մարզից հետո երկրորդն է, իսկ ցամաքային տարածքով՝ առաջինը: Բնակչության թվով այն գրավում է վերջին տեղերից մեկը, առաջ անցնելով միայն Վայոց Ձորի, Արագածոտնի և Տավուշի մարզերից:

Մարզն ունի 113 համայնք, որից. քաղաքային՝ 7, գյուղական՝ 106: Մարզի բնակավայրերի թիվը 135 է, որից՝ սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային է 102-ը :

Ներկա Սյունիքի մարզը հանդիսանում է պատմական Սյունիքի մի հատվածը: Այն Մեծ Հայքի իններորդ նահանգն էր:

Առանձնահատուկ է մարզի աշխարհագրական դիրքը, սահմանների բնույթը և տարածքի ձևը: Այն երեք կողմից սեպաձև խրված է. արևելքից՝ Ադրբեջանի, արևմուտքից՝ նրա մասը կազմող Նախիջևանի, իսկ հարավից՝ Իրանի միջև: ՀՀ մարզերից սահմանակից է միայն Վայոց Ձորին, որի հետ սահմանակից է հյուսիս-արևմուտքում: Սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 472 կմ Իրանի Իսլամական հանրապետությանը՝ 42 կմ, Ադրբեջանի, որից 110 կմ Նախիջևանի և ԼՂՀ-ի հետ:

Այսպիսով, նրա սահմանների ընդհանուր երկարության 85 %-ը բաժին է ընկնում արտաքին, այսինքն՝ պետական սահմաններին և միայն 15 %-ը /կամ 48 կմ/ ներքին սահմանն է: Այդ պատճառով էլ Սյունիքը, գրեթե ամբողջությամբ, դիտվում է որպես սահմանամերձ գոտի: Նրա ճանապարհների մեծ մասը մտնում է փակուղի:

Վերջին տարիներին Սյունիքի աշխարհագրական և տրանսպորտային դիրքն զգալիորեն բարելավվել է: Արաքս գետի վրա ավտոմոբիլային նոր կամրջի կառուցման և Իրանի հետ առևտրա-տնտեսական կապերի զարգացման շնորհիվ, Սյունիքը խիստ կարևոր, տարանցիկ նշանակություն է ձեռք բերել: Նրա միջոցով Սև ծովի ավազանը, Վրաստանը, Հայաստանը կապվում են Պարսից ծոցի, իսկ արևելք-արևմուտք ուղղությամբ՝ Կասպից ու Միջերկրական ծովերի ավազանների երկրների հետ**:

Նյութերը ամբողջությամբ վերցված են «Սյունիքի մարզ» գրքից (Ս. Մանասյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան, Ե., 2002 թ., էջ 5-6):

***Նույն տեղը*

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՌՉԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Իրավիճակը Զանգեզուրում 1918-20 թթ.

Ռուսաստանում, փետրվարյան հեղափոխությունից և հոկտեմբերյան հեղաշրջումից, մանավանդ Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից «Հաշտության մասին» նշանավոր դեկրետից հետո, երբ Այսրկովկասն սկսեց անջատողական, ինքնուրույնացման գործընթաց, և թուրքերն էլ Տրապիզոնում առանձին պետական կազմավորումների ստեղծման և այդ նորաստեղծ կովկասյան հանրապետությունների հետ անջատ-անջատ հաշտություն ստորագրելու կտրուկ խնդիր դրեցին, Այսրկովկասում ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն, որը 1918 թ. հանգեցրեց նրան, որ մայիսի 26-ին, նախ՝ Վրաստանը, ապա 27 և 28-ին՝ Ադրբեջանն ու Հայաստանը իրենց անկախ հռչակեցին: Թուրքական դիվանագիտությունը, կարծես, հասկանում էր, որ եթե իրենք մեկ պայմանագիր կնքեն այսրկովկասյան միասնական պետական կազմավորման՝ Սեյմի հետ, որը շատ խախուտ և անկայուն պետական միավոր էր, ապա վաղը, երբ այն հօդս ցնդի, պետություններից ոչ մեկը տեր չի կանգնի Սեյմ-Թուրքիա պայմանագրին: Ռուսաստանն էլ՝ 1918-20 թթ. զբաղված լինելով քաղաքացիական կռիվներով, ի զորու չէր վերադարձնել Այսրկովկասը և առժամանակ հաշտվեց այդ կացության հետ:

Մի առիթով Անդրանիկն ասել է. «150 000 000 առողջ և կարելիություններով լեցուն ռուս ժողովուրդը մեռած չէ, այլ կապրի... ես ինքս չեմ կրնար համոզվել, թե մեռան ու գացին ռուսները: 1827-են մինչև 1917 ռուս պետությունը 700 000 զինուոր զոհած և անոնց արյունով ներկած է Կովկասեան ամեն մի քար-հող»[1]: Այնպես որ, պետք էր սպասել Ռուսաստանի վերադարձին: Քաղաքական շահերի բախումը հակիրճ բնորոշել է Նժդեհը. «Այլևս ոչ ոք չի հավատում, մեր ժողովրդից զատ, թե կարելի է կանգնեցնել առաջընթացի հաղթական կառքը՝ գետնին փռված պարտվածների և թույլերի հառաչանքներով: Այլևս ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ պետությունները բնական հակառակորդներ են, որոնցմե ամեն մեկը կձգտե տարածվիլ, ուժեղանալ, շահել իր հարևանների հաշվին»[2]:

1918 թ. մարտի 3-ին, Ռուսաստանի հետ չարաբաստիկ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը կնքելուց հետո, իրեն Այսրկովկասում, որպես Թուրքիայի դաշնակից, տեղական գործերին խառնվելու իրավունք վերապահեց Գերմանիան:

1918-1921 թվականներին Այսրկովկասը դարձավ մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Անտանտի, Գերմանիայի, ինչպես նաև Թուրքիայի շահերի բախումների կիզակետ՝ «Կասկածից դուրս է, որ անգլիական կառավարությունը մեծ գոհունակությամբ ականատես եղավ Ռուսաստանի քայքայմանը, -1918 թ. ստեղծված կացության մասին գրում է Ա. Բաբալյանը:- Անգլիական կառավարության համար ռուսական վտանգը հեռանում էր Մերձավոր Արևելքից և անդրկովկասյան երեք հանրապետությունները պըֆըր (իմա՝ բուֆերային - Ս. Խ.) պետությունների դեր էին խաղում Արևելքում: Այլևս Ռուսաստանը մուտք չուներ պարսկական Ադրբեջան ու Գիլան... Հայաստանն իր փոքրիկ ուժերով և լղարիկ միջոցներով չէր կարող վտանգ ներկայացնել Թուրքիայի համար: Այս եղավ գլխավոր պատճառը, որ Տաճկաստանին հարկադրեց ընդունելու հայ ժողովրդի քաղաքական անկախությունը: ...Անգլիա և խղճուկ Հայաստան...»[3]:

Խորհրդային Ռուսաստանի այսօրինակ քաղաքականությունն էլ այդ ամբողջ ժամանակամիջոցում պայմանավորեց տարածաշրջանում նրա դիվանագիտությունը, որի առջև խնդիր էր դրվել ձգձգել՝ այսրկովկասյան հանգուցալուծումը՝ մինչև իր այնտեղ վերադառնալու համար պատեհ առիթ ստեղծվելը: Հայաստանի երիտասարդ Հանրապետությունը՝ իրավիճակից ելք որոնելու փնտրտուքում, երբ ծանրութեթև էր անում Ռուսաստանի և Անտանտի դիրքորոշումները, առաջին աշխարհամարտի ավարտից հետո ավելի շատ հույսեր էր կապում: Եվ դա այն տարիների համար բնական էր, Փարիզի խաղաղության կոնֆերանսի հետ: Այսօր, երբ մենք տասնամյակների հեռվից նայում ենք այն օրերի իրադարձություններին, հեշտությամբ ենք դատողություններ անում: Բայց մի պահ պատկերացնենք՝ քաղաքական խարդավանքների այդ օրերը, երբ հանրապետության կառավարությունն ամեն Աստծու օր փորձում էր լուծել քաղաքական դիլեմաներ, ընդսմին, չունենալով լիակատար տեղեկատվություն, տնտեսական-քաղաքական ծանրակշռություն և ազդեցիկություն, բացի դրությունը փրկելու փափագը, որին ուղղում էր ամեն մի ջանք:

Անդրկովկասի երեք նորակազմ հանրապետությունների համար ամենացավոտ խնդիրներից մեկը, անկասկած, տարածքային-սահմանային վեճերն էին, որոնք ծայր առան անկախության հռչակման առաջին իսկ պահից: 1919թ. հունվարի 21-ին ՀՀ կառավարությունը որոշում է կայացնում Զանգեզուրի և Ղարաբաղի կառավարման սկզբունքների մասին:

«Լսեցին. Մինիստր - նախագահը ի կատարումն Մինիստրների խորհրդի հանձնարարության՝ ներկայացնում է ծրագիր Զանգեզուրի և Ղարաբաղի հայկական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու մասին: Ծրագիրը մշակված է ներքին գործերի մինիստրի պաշտոնակատար Ա. Խատիսյանի աշխատակցությամբ:

Էական կետերն են.

1. Զանգեզուրի և Ղարաբաղի հայաբնակ շրջանները, կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, կառավարվում են հանրապետության կենտրոնական կառավարության կողմից հաստատված օրգաններին միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա:

2. Հաղորդակցության դժվարությունների պատճառով, ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում է գոյություն ունեցող «Զան-

գեզուրի հայկական ազգային խորհրդին», որը կոչվել է «Զանգեզուր - Ղարաբաղի շրջանային խորհուրդ»:

3. Խորհուրդը երկիրը կառավարում է ժամանակավորապես, Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացված լիազորություններով:

4. Խորհրդի ներկա կազմը պետք է լրացվի Ղարաբաղի հայաբնակ մասերի ներկայացուցիչներով, ինչպես նաև շրջանում ապրող թուրք ազգաբնակչության ներկայացուցիչներով՝ համապատասխան իրենց թվին:

5. Խորհրդի կազմը պետք է ներկայացվի հանրապետության կենտրոնական կառավարությանն ի հաստատություն:

6. Մինչև նոր կարգ հաստատելը, երկրի բոլոր պետական հաստատությունները և պաշտոնյաները ենթարկվում են խորհրդին, հիմնվում և հաստատվում են խորհրդի կողմից և պատասխանատու են նրա առաջ:

7. Երկրի եկամուտները (պետական հարկերը և ուրիշ պետական հասույթները) ծախսվում են երկրի պետքերի համար. պակասը լրացվում է հանրապետության գանձարանից:

8. Փետրվար ամսի պետական ծախսերը հոգալու համար հատկացվում է պետական գանձարանից 400 հազար ռուբլի: Անկախ սրանից, պետական գանձարանը հոգում է մի վաշտ (рота) զինվորների ծախքը զինվորական մինիստրության կազմած նախահաշվով:

9. Վերոհիշյալ 400 հազար ռուբլի ծախսելու մասին «Զանգեզուր -Ղարաբաղի շրջանային խորհուրդը» հաշիվ է ներկայացնելու կենտրոնական կառավարությանը:

10. Մարտի և հետևյալ (մինչև նոր կարգեր հաստատվելը) ամիսների համար խորհուրդը պետք է ներկայացնի ի հաստատություն կենտրոնական կառավարության իր նախահաշիվը (смета), ցույց տալով միաժամանակ, թե ծախսերի որ մասը կարող է ծածկվել տեղական հասույթներով և որ մասը պետք է հոգացվի պետական գանձարանից: Վերջինը չպետք է գերանցանցե 400 հազար ռուբլի ամսական:

11. Հանրապետության կառավարությունն ուղարկում է Գորիս մի պետական կոմիսար, իբրև իր ներկայացուցիչ՝ Զանգեզուր-Ղարաբաղի հայկական շրջանի համար:

12. Պետական կոմիսարին հանձնարարվում է հսկողություն ունենալ խորհրդի գործունեության օրինականության վրա և, հարկ եղած դեպքում, ցուցումներ անել խորհրդին կառավարության անունից:

13. Փետրվար ամսի պետքերի համար հաստատված 400 հազար ռուբլի գումարը պետք է ծախսվի պետական կոմիսարի գիտությամբ և հավանությամբ: Հետագա ամիսներում ծախսերը պիտի կատարվեն հանրապետության կառավարության կողմից հաստատված նախահաշիվներով:

14. Նախընթաց կետի համաձայն, Գորիսի գանձարանին (казначейство) ներկայացված օրդերները պետք է ունենան պետական կոմիսարի ստորագրությունը, առանց որի չպետք է կատարվեն:

15. Եթե պետական կոմիսարը զինվորական անձ լինի, նրան պետք է հանձնվի նաև Գորիսի վաշտի հրամանատարությունը, հակառակ դեպքում, հատուկ հրամանատար պետք է նշանակվի զինվորական մինիստրի կողմից:

16. Պետական կոմիսարի ընտրությունը հանձնարարել մինիստր-նախագահին՝ ներքին գործերի և զինվորական մինիստրների համաձայնությամբ:

Որոշեցին. Ընդունել ծրագիրը և հանձնարարել մինիստր - նախագահին հարկավոր կարգադրություններ անել այն իրագործելու համար[4]:

Ծանր կացության մեջ գտնվող հանրապետության առջև կանգնած էին Ղարաբաղի, Նախիջևանի, դրանց հետ՝ նույնիսկ Բասարգեչարի[5], Վեդիբասարի մի մասի, Դարալագյազի խնդիրը Հայաստանի ու Ադրբեջանի միջև, Լոռի-Ախալքալաքի խնդիրը Վրաստանի հետ, Կարսի, Սուրմալուի խնդիրը՝ Թուրքիայի հետ: Էլ չենք խոսում Սևրի դաշնագրի ու Թուրքիայի հետ հարաբերությունների կառուցման նոր սկզբունքների մասին: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր անմիջական հարևանների հետ հարաբերությունները կառուցելիս աշխատում էր, ըստ կարելվույն, առաջնորդվել բարի-դրացիության սկզբունքով և ծագած վեճերն ու կոնֆլիկտները լուծել քաղաքական բանակցությունների, փոխադարձ համաձայնության ճանապարհով: Հայաստանի հարաբերություններն ամենից ավելի սերտ ու բարեկամական են եղել հարևան Պարսկաստանի հետ, մասամբ՝ Վրաստանի և մեզ արդեն հասկանալի պատճառներով, բարդ ու կոնֆլիկտային՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ:

Առանձնապես սուր էր հակասությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև՝ Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի հարցերում: Սակայն վերջինիս չի հաջողվում Լեռնային Արցախը ենթարկել Ադրբեջանին: Ինչ վերաբերում էր Զանգեզուրին, ապա այն, սկսած 1918 թ. երկրորդ կեսից, անկախ էր՝ շնորհիվ Անդրանիկի, իսկ 1919 թ. մարտից՝ ՀՀ ներկայացուցիչ, նահանգապետ Արսեն Շահմազյանի: 1919 թ. գարնանամուտին, անգլիացիների պահանջով, Անդրանիկը Զանգեզուրից հեռանում է: Զանգեզուրում կացությունը հատկապես ավելի է ծանրանում, երբ 1919 թ. ամռանը Ադրբեջանին հաջողվում է իր ուժերով և զգեստավորված թուրք սպաների և էմիսարների օժանդակությամբ, ժամանակավորապես գրավել Շարուր-Նախիջևանը և, փաստորեն, օղակման մեջ առնել Զանգեզուրը: Վերջինիս պաշտպանությունը ստանում է ստրատեգիական նշանակություն, քանզի այն Հայաստանի և Արցախի միջև կապող միակ օղակն էր: Ուստի, կորցնել Զանգեզուրը, նշանակում էր կորցնել Արցախը: Թաթարական (ադրբեջանական) զորքերը բազմիցս փորձեցին զավթել Սյունիքը, սակայն, ամեն անգամ հանդիպելով տեղացի քաջարի հայ բնակչության հակահարվածին, մեծ կորուստներով ետ նահանջեցին: Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը, որը ներքաղաքական և արտաքին քաղաքական առումով ծանր վիճակում էր գտնվում, ինչպես Զավախքի (Ախալքալաքի), այնպես էլ Արցախի և Սյունիքի հարցում, հապաղեց Հայաստանի անբաժանելի մասը ճանաչելուց, որից

և փորձեցին օգտվել հակառակորդ կողմերը: Հայաստանի կառավարության վարանումը, հավանաբար, պետք է բացատրել Քաջազնունու կառավարության չափից ավելի զգուշավոր, հարևանների հետ բարդություններից խուսափելու քաղաքականությամբ: Ղարաբաղ-Զանգեզուրի ավելի քան 300 հազար հայության՝ իրենց օգնելու խնդրանքներին Հայաստանի կառավարությունը պատասխանում էր միայն հատ ու կենտ ներկայացուցիչներ ու սրտապնդիչ գրություններ ուղարկելով: Այդ խնդրի դրական լուծման գործում իր բացասական դերը խաղաց նաև անգլիական զորքերի հրամանատարությունը: Սրանք ամեն կերպ ձգտում էին աջակցել Ադրբեջանին, վերջինիս իշխանությունը, թեկուզ ժամանակավորապես, Ղարաբաղի վրա տարածելու համար[6]:

1919 թ. մարտի 28-ին ՀՀ կառավարությունը, Սյունիքի շրջափակումը մեղմելու նպատակով, որոշում ընդունեց կառուցել Քեշիշքենդ (Եղեգնաձոր)-Անգեղակոթ խճուղին, որին զուգահեռ, պիտի անցկացվեր հեռագրային գիծ: Մինչ այդ Զանգեզուրը Երևանի հետ կապված էր Նախիջևանի վրայով: Աշխատում էին Կապանի պղնձահանքերը: Ճապոնացիների հետ նախագիծ էր մշակվում՝ կառուցելու Ելենովկա (Սևան)- Նոր-Բայազետ (Գավառ)- Գորիս երկաթգիծը: 1919 թ. Գորիսում՝ Վարարակն գետի վրա, սկսվեց 48 կվտ հզորությամբ երկրորդ հիդրոէլեկտրակայանի կառուցումը[7]:

1919-1920 ուստարում գործում էին Զանգեզուրի համարյա բոլոր հայկական դպրոցները, նույնիսկ հրավիրվեց ուսուցիչների համագումար: Կառավարությունն սկսեց ուշադրություն դարձնել նաև կրթական գործին:

Զուգընթացաբար, տարվում էր նաև քաղաքացիական մասի կազմակերպական աշխատանքը: Գավառապետ նշանակվեց Ն. Հովսեփյանը, օգնական և միլպետ՝ Սաքոն: Վերաբացվեցին Գորիսի գանձարանը, Գորիսի եւ Հանքերի հիվանդանոցները[8]:

Ծանր էր Զանգեզուրի ներքին և արտաքին դրությունը 1920 թ. սկզբին: «Սյունիք» թերթն իր «Տարեմուտի առթիվ» ամանորյա առաջնորդողում, բնորոշելով ընդհանուր իրավիճակը, գրում է. «... մարդկությունը 1919 թվականը դիմավորեց խանդավառ երազանքներով ու վարդագույն հույսերով, որ էգուց միւս օրը խաղաղութեան հրեշտակը կը սաւառնի արևելքից-արևմուտք և տանջված երկրին կը բերի խաղաղութիւն, անդորր, կուլտուրական կեանքի հնարավորութիւն... Վերսայլի ... դռներից ներս սկսեց «առիւծի բաժնի» համար վէճը... եւ յոյսերով սկսած 1919 թիւը էսօր վերջանում է կատարեալ հիասթափումով...» և ապա շարունակում. «... այս երկու փոթորկոտ և արիւնոտ տարիների վայրիվերումների շնորհիւ, մեր հասարակական կեանքը ընթացել է միմիայն աննորմալ պայմաններում: Մի կողմից. նախկին պետական իշխանութեան քայքայում, որի հետևանքով գլուխ բարձրացրեց մեր երկրում անկախութիւնը, միւս կողմից՝ տաճկական հայաջինջ քաղաքականութեան վտանգը, որ ստեղծել է ազգամիջեան թշնամութիւն՝ հայ և թուրք ժողովուրդների միջև, միանգամայն անհնար դարձրին զարգացնելու հասարակական որևէ ձեռնարկութիւն»[9]:

Անկախության հռչակումից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության կարևորագույն որոշումներից մեկն էլ հայերենը պետական լեզու ճանաչելն էր և այն գործի դրվեց նաև Զանգեզուրում[10]:

Գտնվելով ադրբեջանական շրջափակման պայմաններում, տեղական իշխանությունները մեծ ուշադրություն էին դարձնում բանակի կազմակերպական ամրապնդմանը, բարոյական ոգու բարձրացմանը:

Գավառում 1920 թ. ձմռանը մոլեգնում էր բծավոր տիֆը: Փետրվարի 15-ից, երկու շաբաթով, փակվում են դպրոցները: Իշխանությունները հոգ էին տանում բժշկական ծառայության կազմակերպմանը, և ֆինանսական ծայրահեղ սուղ միջոցների պայմաններում անգամ, կարողանում էին «բժիշկների և ֆելդշերների շտատներ նշանակել Բուն Զանգեզուրում՝ Գորիսում, ապա՝ Սիսիանում՝ Բռնակոթում, Ղափանում՝ Հանքերում, Գենվազում՝ Մեղրիում», (մեկական բժիշկ, մեկական ֆելդշեր), առանձին ֆելդշերական կետեր բաց անում Խնձորեսկում, Տաքևում, Անգեղակոթում, Արծվանիկում: Մինաս Մինասյանը նշանակվում է շրջանի գլխավոր բժիշկ, որին պետք է ենթարկվեր նաև Գորիսի բուժծառայությունը: Որպես սանիտարական միջոցառում, 1919 թվականի դեկտեմբերի 28-ից, բացվում է Գորիսի կառավարական բաղնիքը, որի ընդհանուր համարները տրամադրվում են զորքին ու որբանոցին:

Զանգեզուրի տարածքը, որը վիճելի էր Հայաստանի և Ադրբեջանի միջև, առայժմ շարունակում էր կառավարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, կիրառել նրա որոշումները, դե-ֆակտո համարվելով նրա մի մաս[11]:

Այսպես, կտրված լինելով մայրաքաղաքից և համապատասխան գերատեսչությունների ու կառավարական մարմինների հետ ունենալով կապի դժվար լուծելի խնդիր, նահանգապետն ամբողջությամբ իր վրա է վերցնում հրահանգավորման գործընթացը և դեկտեմբերի 20-ին պետերին առաջարկում և հրամայում է «ի ղեկավարումն ցուցումներն իրենից ստանալ»[12]:

1920 թ. մարտի 25-ին՝ նահանգապետ Մելիք-Յոլչյանի հրամանով, կիրարկման է դրվում «...Հայաստանի կառավարության Մինիստրների խորհրդի 1918 թվականի թիվ 19, Հայաստանի պառլամենտի 1919 թվականի նոյեմբերի 28 թիվ 72-73 որոշումը և օրենքները... »[13]

Ելնելով կառավարչական նպատակահարմարությունից, Գեղվա և Օխչու ձորերում կազմակերպվում է նոր՝ 6-րդ կոմիսարային շրջան, որի մեջ մտնում են նաև հայկական Քաջարանց, Քրդիկենց, Վերին Հանդ, Փուխրուտ, Փիր-Մազրա գյուղերը, որտեղ կոմիսար է նշանակվում Իվան Շահնազարյանը: Կատարվում են կադրային վերադասավորումներ: 4-րդ շրջանի կոմիսար Լևոն Միքայելյանը նշանակվում է 5-րդ շրջանում՝ Առաքել Շահբազյանի փոխարեն, ապա 6-րդ շրջանից 5-րդ ոստիկանական շրջանի ժամանակավոր կոմիսար է նշանակվում Իվան Շահնազարյանը:

Կառավարությունը մտահոգված էր նաև գյուղացիության սոցիալական դրությամբ, փորձում էր, ուժը ներածին չափ պայքարել սոցիալական սուր իրավիճակը մեղմելու համար: Պարենավորման կոմիսար է նշանակվում Նիկոլայ Կրմենանցը: Հանդես գալով «Սյունիք» թերթի էջերում, նա գրում է. «Գյուղական աշխարհում տիրող պարագիտ կուլակները դեռ յետ չեն քաշվել աշխատաւոր գյուղացիութեան կմախկացած մարմնի հիւթը ծծելուց... Արդարութիւն, շիտակութիւն և խիղճ ասած բանը գոյութիւն չունեն մեր գիւղերում.... Գիւղացու աղքատիկ գրպանն է, որ լցնում է անպարտաճանաչ կաշառակեր պաշտոնեաների գրպանները... (գեներալ-կոմիսարի- Ս.Խ.) ձգտումն էլ այն է, որ արմատախիլ անի գիւղական աշխարհում տիրող բոլոր ցեցերին, կուլակներին և ցեց պաշտոնեաներին...»[4]:

Զանգեզուրի արտաքին կապերն այս շրջանում պահպանվում էին հիմնականում Պարսկաստանի հետ՝ Մեղրիի վրայով[5]:

Առտնին գործունեության մի վկայություն է նաև Գորիս-Քեշիշքենդ, Գորիս-Տեղ, Գորիս-Հանքեր-Գենվազ երթուղիներով փոստի կանոնավոր առաքումը: Բացվեցին փոստատներն ու կանոնավորվեց փոստային հարաբերությունը Երևանի հետ:

Փաստորեն երկրամասն ապրում էր, գործում, ուներ իր բազմաթիվ խնդիրները, որոնք փորձում էր լուծել սեփական ուժերով: Մինչդեռ, նրա շուրջ փոթորկվող քաղաքական իրադարձությունները երկրամասին հարկադրում էին մաքառել սեփական տանը ապրելու իրավունքը պահպանելու համար, ինչը փառահեղ կերպով հաջողվում է Սյունյաց Սպարապետ Մեծն Նժդեհին:



Հին Խնձորեսկ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

20-րդ Դար

Սյունիքի ինքնավարության հռչակումը

Սյունիքի ինքնավարության հռչակման մասին հանգամանորեն անդրադարձել է Ա. Սիմոնյանը:

Մինչ Արարատյան Հանրապետության դրության կայունացումը, Զանգեզուրի ռազմաքաղաքական իրավական դրության վերջնական պարզվելը, երկիրը պետք է ապրեր ու կառավարվեր սեփական օրենքներով: Իսկ օրենքներ կարող էր ստեղծել ժողովրդի հավաքական կամքը: Անհրաժեշտ էր նաև ի մի բերել գավառում թուրք-բոլշևիկյան զինված ուժերի դեմ անցած ամիսներին մղված արյունալի կռիվների արդյունքները, նաև՝ մշակել ու ընդունել ապագա գործողությունների ծրագիր: Այդ խնդիրները պետք է լուծեր Համազանգեզուրյան առաջին համագումարը[1]:

Համագումարի նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին 1920 թվականի դեկտեմբերի կեսերից: Գարեգին Նժդեհը և Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը գավառի բոլոր շրջաններ ուղարկեցին հեռախոսագրեր՝ պահանջելով հրավիրել շրջանային համագումարներ, նախապես այդ համագումարների պատվիրակներ ընտրելով գյուղական համայնքներում: Շրջանային համագումարներին առաջարկվում էր քննարկման դնել Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջման և դրա նկատմամբ շրջանի բնակչության բռնելիք դիրքի հարցը, ինչպես նաև ժողովրդական հիմունքներով ընտրել Համազանգեզուրյան համագումարի պատգամավորներ և նրանց Տաթև ուղարկել՝ համապատասխան մանդատներով:

Զանգեզուրի բոլոր շրջանների գյուղական համայնքներում ժամանակին անցկացվեցին ժողովներ, առաջադրվեցին, քննարկվեցին և ընտրվեցին շրջանային համագումարի պատգամավորներ: Այդ համագումարները, իրենց հերթին, ընտրեցին Համազանգեզուրյան առաջին համագումարի պատգամավորներ, որոնք մեկնեցին Տաթև:

Բացառություն էր կազմել Արևիքի (Մեղրու) շրջանը, ուր հեռախոսագիրը հասել էր մեծ ուշացումով՝ դեկտեմբերի 21-ի երեկոյան:

Դեկտեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը Արևիքի բոլոր 14 հայկական գյուղերում տեղի են ունենում հասարակական ժողովներ, որոնք ընտրում են ներկայացուցիչներ և շտապ մանդատներով ուղարկում Մեղրի գյուղ շրջանային գյուղացիական համագումարի: Դեկտեմբերի 22-ին բացված համագումարին 12 գյուղերից ներկա էին 68 պատգամավորներ: Բացակայում էին Կարճևանի և Ապկեզի ներկայացուցիչները:

Արևիքի գյուղացիական պատգամավորների համագումարի օրակարգի հարցերն էին.

1. Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը և Արևիքի ժողովրդի բռնե-

լիք դիրքը:

2. Համազանգեզուրյան համագումարին ներկայացուցիչներ ուղարկելու մասին:

Օրակարգի առաջին հարցի քննարկումից հետո ընդունվեց հետևյալ որոշումը.

«Բոլշևիկյան իշխանությունը բռնի կերպով է փաթաթված հայ ժողովրդի վզին, Հայաստանը սովետական է հայտարարված տաճկական և ռուսական զորքի բռունցքի ճնշման տակ: Նորմալ պայմանների մեջ երբեք նման քաղաքական հեղաշրջում չէր կարող կատարվել Հայաստանում, ընդհակառակը, շատ անգամ Հայաստանը ցայտուն կերպով արտահայտել է, որ **ինքը Ազատ և Անկախ Հայրենիք է ցանկանում:**

Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս համոզված ենք, որ այս ապստամբությունն ավելի արագ կկատարվի, եթե Զանգեզուրը կանգուն մնա իր սահմանների մեջ: Իսկ ժողովրդի հոգին և հերոսական կամքն անընկճելի է, այն է՝ ապրել ազատ: Այդ իսկ նկատառումներով, Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս դեկտեմբերի 22-ի ժողովում գտանք, որ մեր հորիզոնների վրա դեռ փրկության ճառագայթները ընդմիշտ չեն մարել, որ կա փրկության ճանապարհ, ուստի, որոշեցինք պաշտպանվել մինչև վերջին հնարավորությունը»[2]:

Պատգամավորները Մեղրիից դուրս եկան, բայց Լիճք-Տաշտոնի ճանապարհն առատ ձյան պատճառով փակվել էր, և նրանք ստիպված էին ետ վերադառնալ ու դեկտեմբերի 23-ին անցնել Հանքերը:

Նրանք Հանքերից հեռախոսով Տաթև հղեցին Արևիքի գյուղացիական համագումարի որոշումը, ավելացնելով, որ արևիքցիները լի են անկոտրում վճռականությամբ. «Թույլ չտալ ոչ մի օտար զորքի և օտար մարդկանց ներս խուժելը մեր երկրի սահմանները և խառնվելը մեր ներքին գործերի մեջ»[3]:

Տաթևի համազանգեզուրյան I-ին համագումարը

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից մի քանի օր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ին, Տաթևի վանքում տեղի ունեցավ համազանգեզուրյան 1-ին համագումարը, որի գլխավոր հարցը Խորհրդային Հայաստանի նկատմամբ ունենալիք վերաբերմունքն էր: Այն օրակարգում ձևակերպված էր այսպես՝ «Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին և համագումարի բռնելիք դիրքը»: Համագումարի վերաբերմունքի ընտրության մեջ կարևոր տեղ ու դեր էր տրվում այն բացասական արդյունքներին, որ ունեցել էր խորհրդային իշխանության ժամանակավոր գոյությունը Զանգեզուրում 1920 թ.՝ հուլիս-նոյեմբեր՝ հինգ ամիսների ընթացքում: Այդ ամիսների արդյունքները համագումարի էր բերել Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհուրդը իր 1920 թ. նոյեմբերի 30-ի նիստում: Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը, որպես ժամանակավոր կառավարման օրգան, ստեղծվել էր Զանգեզուրի ազատագրումից հետո, որը գործելու էր մինչև համագումարի միջոցով հիմնական իշխանության ստեղծումը:

«Զանգեզուրի գյուղացիական խորհրդի այսօրվա նիստում,- կարդում ենք արձանագրության մեջ,- որոշվեց արձանագրել տարվույս հուլիսի 5-ից նոյեմբերի 20-ը խորհրդային կառավարության միջոցով և կարգադրությամբ կատարված սպանությունները, բռնագրավումները և բռնությունները, որոնք գործադրված են ազգաբնակչության բոլոր խավերի նկատմամբ Զանգեզուրում»: Այնուհետև, տվյալներ են բերված ըստ գյուղերի և ամբողջությամբ վերցված[4]:

«Ազատ Սյունիք» հրատարակության մեջ, որպես օրինակ, բերված է միայն Կոռնիձոր և Տեղ գյուղերի բնակիչների համախոսականների սեղմ բովանդակությունը, որը ներկայացնում է սարսափելի պատկերներ: Կարմիր բանակի, նրա կազմում թուրքական «կամավորների կարմիր» դիվիզիայի օկուպացիան, բոլշևիկների տիրապետությամբ հանդերձ, երկրամասում» ստեղծել էր ահաբեկչության ծանր մթնոլորտ[5]: Նման պայմաններում աննպաստ կարծիք էր ստեղծվել և անվստահություն ձևավորվել նաև Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ելնելով այդ ամենից, համագումարը որդեգրեց «առայժմ սպասելու» մարտավարությունը: Առայժմ սպասելու և հարցի լուծումը ձգձգելու մարտավարությունը շարունակվեց նաև հետագայում, ընդհուպ, մինչև Զանգեզուրի գոյամարտի ու ինքնապաշտպանության վերջը[6]:

Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ներկա էին ըստ բնակչության թվի ընտրված պատգամավորները, գավառի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, Զանգեզուր-Գողթանի սպարապետ Գարեգին Նժդեհը, ընդամենը՝ 118 մարդ[7]:

Համաժողովի դիվանի կազմում ընտրվում են Գեդեոն Տեր-Մինասյանը՝ նախագահ, Եգոր Հարությունյանը և Տիգրան Մելիք-Հուսեինյանը՝ փոխնախագահներ, Սամվել Մաշուրյանը և Նիկոլայ Դորունցը՝ քարտուղարներ:

Համագումարի օրակարգը

Առաջարկվում է համագումարի հետևյալ օրակարգը.

1. Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին և համագումարի բռնելիք դիրքը:
2. Իրենց գործունեության մասին բոլոր շրջանային խորհուրդների զեկուցումները:
3. Ինքնավար Սյունիքի հռչակումը և նրա կառավարման ձևի որոշումը:
4. Ինքնավար Սյունիքի իշխանության կազմակերպումը (Սպարապետի հրավիրումը, Ինքնավար Սյունիքի պառլամենտի դիվանի, Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի ընտրությունները):
5. Իշխանության կենտրոնատեղի որոշումը:
6. Արտաքին քաղաքականություն (փոխհարաբերությունների մշակում Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների, Պարսկաստանի կառավարության և հարևան թուրքերի հետ):
7. Ինքնապաշտպանության հարց:
8. Պարենավորման հարց:
9. Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշման հարց:
10. Մասնավոր խոշոր սեփականությունների պետականացում.
ա. վանքապատկան և եկեղեցական,
բ. խաների, բեկերի և մելիքների,
գ. արդյունաբերական ձեռնարկությունների պետականացման հարց,
11. Ընթացիկ հարցեր (որբանոցի, ջուլհականոցի բացման, նախկին կառավարություններից զանազան անձնավորությունների մոտ մնացած գումարների պահանջման, դրամների գործադրության հարցը)[8]:

Ինչպես տեսնում ենք, համագումարը, ըստ էության, նաև Սահմանադիր ժողովի դեր է կատարում, քանի որ քննության էին առնվելու մի շարք հիմնական պետական սկզբունքներ, մասնավորապես որոշվելու էր նաև երկրի պետական կառույցի խնդիրը[9]:

«Սովետական կառավարությունը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնությունները կատարեալ կերպով առաջ տանելու համար, հարիւրավոր անմեղ մարդիկներ բանտ ձգեց ու խեղդեց:

Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիությունը այլևս չկարողացավ տանել նման բարբարոսութիւններ, որոշեց դուրս վռնդել սովետական Ռուսաստանի զօրքերին և նրա դիմակի տակ թաքնված ադրբեջանական վարձկաններին...»:[10]

Մյուս կողմից, պատգամավորներն այն տեսակետն էին արտահայտում, որ Խորհրդային Հայաստանի նորածին իշխանությունը տվյալ իրադրության մեջ ի վիճակի չէ պաշտպան կանգնելու Զանգեզուրին, առավել ևս՝ անզոր է գավառն ընդգրկելու հանրապետության կազմի մեջ[11]:

Ելնելով դրանից, համագումարը պարզեց «Զանգեզուրը յայտարարել

ժամանակաւորապէս ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ, մնալով անկախ, մինչև քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»[12]:

Պատգամավորներն իրենց ելույթներում նկարագրում էին Զանգեզուրի ծանր տնտեսական վիճակը, ցավով նշում, որ վաղուց դադարել են աշխատելուց Ղափանի պղնձահանքերը և ձուլարանը, փակվել են Գորիս քաղաքի մանր ձեռնարկությունները:

Ծայրահեղ անկման էին հասել գավառի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Խոպան էին մնացել դաշտերը, բարձիթողի վիճակում՝ այգիները: Կեր չկար կովերի ու լծկանների համար:

Երեք երկար տարիներ մեկուսացված լինելով դրսի աշխարհից, գավառի բնակչությունն իր գոյությունը պահպանում էր միայն ու միայն ներքին աղքատ միջոցներով՝ ամեն ինչում տնտեսելով, հաճախ՝ ուղղակի զրկելով իրեն:

Շրջանառության մեջ գտնվող անդրկովկասյան բուն թղթադրամները և Հայաստանի Հանրապետության չեկերն արժեզուրկ էին, չէին երաշխավորված որևէ տարադրամով, ուստի, առևտուրը ոչ այլ ինչ էր, քան պարզ ապրանքափոխանակություն: Այդ ամենի մասին խոսում էին համագումարի պատգամավորները և առաջարկներ անում, թե ինչպես շտկել դրությունը:

«Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը,- կարդում ենք համագումարի որոշման մեջ,- մոտ 5 ամսվա ընթացքում դատարկեց դառնության բաժակը մինչև վերջին կաթիլը: Խորհրդային հրամանատարությունը հենց առաջին քայլից գավառիս գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ նսեմանում են պատմական լենկ-թեմուրյան և արևելքի բարբարոսների արշավանքներն ու գործելակերպը»:

«Ինքնավար Սյունիքի» հռչակման անհրաժեշտությունը և «մինչև»-ի իմաստը բացատրել է Նժդեհը 1923 և 1925 թթ. հրատարակած հոդվածներում: «Հայաստանի Հանրապետության անկումից հետո,- գրել է նա,- երբ Կարմիր բանակի հրամանատարության հետ իմ կողմի բանակցությունները մնացին անհետևանք, երբ կարմիրները, «շլացած Երևանի կամովին խորհրդայնացումից», մերժեցին հաշտության իմ առաջարկած նախնական պայմանները, ստիպեցին Սյունիքը հայտարարել անկախ: «Սյունիքը չէր կարող տեղի տալ, քանի դեռ տաճկական զորքերը գտնվում էին Ալեքսանդրապոլում, Շարուրում և Նախիջևանում, միշտ պատրաստ, ցանկության դեպքում՝ արհամարհելու Երևանի բոլշևիկյան ուժերը և շարժվելու Սյունիքի դեմ»: Միաժամանակ, Նժդեհը խոսում է «կարմիր կացնի սարսափի տակ» ընկած «ամբողջ հայ մտավորականության» շահերի մասին[13]:

Նորից անդրադառնալով տվյալ հարցին, Նժդեհը նշում է, որ Հայաստանի Հանրապետության անկումով Զանգեզուրը դադարեց ինքնանպատակ լինելուց և դարձավ միջոց, որով խնդիր էր դրված ապահովել «մեր լեռնա-

հայության ֆիզիկական գոյությունը սովետ-պանիսլամական վտանգից», «փրկել Հայաստանի հողը մահացու անդամահատությունից, իսկ հայ մտավորականությանը՝ գլխովին ոչնչացումից»: Ուստի, պետք էր, Զանգեզուրը «ներքուստ ավելի ևս ամրացնելու նպատակով», հռչակել այն «Ինքնավար Սյունիք»[14]:

Այսպիսով, եթե մինչև Հայաստանի խորհրդային դառնալը Զանգեզուրը պայքարում էր Ադրբեջանի հավակնություններից պաշտպանվելու համար, ապա դրանից հետո նա վերածվեց միջոցի՝ ստիպելու, որ խորհրդային իշխանությունն ընդունի իր պայմանները՝ խորհրդային բանտերից ազատելու հայ մտավորականներին, ինչպես նաև կանխելու խորհրդա-քեմալական հետագա հնարավոր վտանգը Հայաստանի նկատմամբ:



Տաթևի վանք. Պողոս-Պետրոս տուսնարի վանքերից մեկը (1304 թ.)

ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
«Կառավարության ձևի գլխավոր գծեր»

Տաթևի համագումարն ընդունեց Ինքնավար Սյունիքի, այսպես կոչված, սահմանադրությունը, որն անվանվում է «Կառավարության ձևի գլխավոր գծեր»: Ըստ դրա, բարձրագույն օրենսդիր մարմինը խորհուրդն էր /պառլամենտ-խորհրդարանը/ որպես ընտրովի մարմին: Տվյալ պահին համագումարը հայտարարվեց օրենսդիր: Գործադիր մարմինը կամ պրեզիդիում-դիվանն ընտրվում էր խորհրդարանի անդամներից և ոչ անդամներից՝ 6 ամիս ժամանակով, 9 հոգուց բաղկացած, որը ղեկավարելու էր երկրի զինվորական ու քաղաքացիական բոլոր գործերը:

Որոշման մեջ ուղղակի նշվում է որ. «Համագումարը միաձայն ընդունում ու հաստատում է ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձևի հետևեալ գլխաւոր գծերը.

Սոյն համագումարը ճանաչել ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին-պարլամենտ և վերապահել նրան Սիւնիքի բախտի լիակատար տնօրէնութիւնը»[15]:

Խորհրդարանն էր նշանակում և արձակում զինվորական ընդհանուր հրամանատարին, պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում, արտակարգ դեպքում դա վերապահելով նաև սպարապետին:

Ըստ նշված սահմանադրության կամ սահմանադրական օրենքի, Սյունիքում հաստատվում են հանրապետական կարգեր. կառավարման հանրապետական խորհրդարանական ձև: Խորհրդարանի կազմումը բավական ժողովրդավարական է: Փաստորեն, յուրաքանչյուր գյուղական համայնք իր պատգամավորն ուներ պառլամենտում: Ընդհանուր գծերով «Սյունյաց սահմանադրությունը» հիշեցնում է «Որոգայթ փառաց»-ի ընտրահամակարգի սկզբունքները*:

«Սյունիքի սահմանադրությունը» Խորհրդարանը (պառլամենտը) հաստատում է ոչ միայն որպես Սյունիքի բարձրագույն օրենսդիր մարմին, այլև որպես Սյունիքի բախտի լիակատար տնօրենի: Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ Խորհրդարանի գերակայությունը, կոլեգիալ կառավարմանը գերապատվություն տալու գաղափարը հետևողականորեն ամրագրվել է հայկական հիմնական սահմանադրական ակտերում: «Որոգայթ փառաց»-ում, Արևմտահայ Ազգային սահմանադրության (1860-63 թթ.) մեջ, ինչպես տեսանք՝ նաև «Սյունյաց սահմանադրություն»-ում, կամ սահմանադրական օրենքում: Խորհրդարան-պառլամենտի իշխանության մյուս թևերի

**«Որոգայթ փառաց»-ի մասին մանրամասն տես Մ. Մ. Թելունց, Հայ ազգային ազատագրական շարժումը 18-րդ դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1995 թ.:*

նկատմամբ գերակայության գաղափարը բուրժուադեմոկրատական կարգերի երկունքի շրջանի արդյունք էր: Այդ գաղափարն իր ուղղակի ազդեցությունն ունեցավ նաև ժամանակաշրջանի հայ իրականության վրա: Սակայն համայնական կառավարման միտումներն ու պրակտիկան հայ իրականության մեջ ավելի խորը ակունքներ ունեն. արդեն 5-րդ դարի հայ պատմագիրները բազմիցս հիշատակում են աշխարհաժողովների մասին, որոնցում թե իշխանների, և թե շինական-ռամիկների մասնակցությամբ քննարկվում էին երկրի հասարակական-պետական կյանքին վերաբերվող կարևորագույն հարցեր*:

Վարչատերիտորիալ բաժանումը

Վարչական տեսակետից Սյունիքը բաժանվում էր 6 շրջանների՝ Բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ: Շրջանում իշխանությունը պատկանում էր գործադիր մարմնին, 3-5 անդամով, դարձյալ՝ 6 ամիս ժամանակով: Նրանց վերապահված էր շրջանների ներքին հարցերի լուծումը, որոնք չունեին համապետական նշանակություն: Շրջանային գործադիր մարմինն ուներ իր մասնաճյուղերը՝ ներքին գործերի, պարենավորման և զինվորական:

Շրջանը /գավառակը/ ուներ իր գավառապետը և շրջանային կոմիսարները, որոնց ընտրում էր շրջանային գործադիր մարմինը իր կազմից և հաստատում խորհրդարանի դիվանը:

Գյուղը կամ համայնքն ուներ իր գյուղական կոմիսարը, որոշ դեպքում, նաև՝ կոմիսարի օգնականը: Նրանք ընտրվում էին գյուղական հասարակության և համայնքի կողմից և հաստատվում շրջանային գործադիր մարմնում:

Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմինը վերահսկում էր պետական հիմնարկությունների գործունեությունը:

Կառավարության (դիվանի) ընտրությունը, Սյունյաց Սպարապետի հրավիրումը

Համագումարի առանձին՝ միաձայն որոշմամբ, ազատարար և հերոս Նժդեհը հրավիրվեց որպես Սյունյաց սպարապետ:

Համագումարը, գաղտնի քվեարկությամբ, ընտրեց դիվանի /կառավարության/ 8 անդամներ: Գենվազը, որի ներկայացուցիչները տեղ չհասան համագումարին մասնակցելու համար, ընտրելու էր դիվանի 9-րդ անդամին:

Ինքնավար Սյունիքի իշխանության կենտրոնատեղին Գորիսն էր:

Համազանգեզուրյան համագումարը որոշումներ ընդունեց նաև արտաքին հարաբերությունների վերաբերյալ: «Զանգեզուրը միշտ ձգտել է լինել Մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը,- արձանագրել է համապատասխան բանաձևը: Բայց, նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխությունները, որ նա, ստիպված, մի շարք քաղաքական անբարեհաջող հանգամանքներից ելնելով, իրեն հայտարարել է խորհրդային, մի իրավակարգ, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր ժողովուրդը, համագումարը որոշեց, մինչև նրա այդ իրավակարգից բաժանվելը, գործել սեպարատ և ապրել ուրույն կյանքով»:

Բանաձևեր ընդունվեցին նաև Ադրբեջանի կառավարության հետ բարեկամական վերաբերմունքի, Պարսկաստանի հետ փոխհարաբերությունները զարգացնելու, այնտեղ ներկայացուցիչ ունենալու, ինչպես նաև Զանգեզուրում հարևան թուրք բնակչության հետ թշնամանքը դադարեցնելու, երկու դարավոր հարևանների միջև սերտ բարեկամություն հաստատելու մասին[8]:

Ինքնավար Սյունիքի դիվանի /կառավարության/ նախագահ ընտրվեց Գեղեոն Տեր-Մինասյանը:

Մինչև 1920 թ. դեկտեմբերի 25-ը՝ հակառակորդից ազատագրված Զանգեզուրը ղեկավարում էր 7 մարդուց բաղկացած Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը: Սակայն, ինչպես գրել է Ս. Վրացյանը, «Երկրի գերագույն իշխանությունը, փաստորեն, հանդիսանում է սպարապետ Նժդեհը: Նժդեհի անձնական հատկությունները և նրա արտակարգ ազդեցությունը ժողովրդի վրա ստվերի մեջ են թողնում կառավարությունը»: Այսպիսով, կարելի է ասել, ինչպես նկատել է Սիմոն Վրացյանը, համազանգեզուրյան 1-ին համագումարն ուներ սահմանադիր ժողովի նշանակություն:

Համագումարից հետո՝ 1921թ. փետրվարի 23-ին, հրապարակվեց Ինքնավար Սյունիքի կառավարության առաջին կոչը «Հայ ժողովրդին», ուր գնահատվում էր երկրամասի ինքնավարության հռչակումը և մեծարվում Նժդեհի սպարապետությունը:

---

*Տես Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 87-109: Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 103-143:

Սպարապետի օծումը Գորիսի Սբ. Գ. Լուսավորիչ եկեղեցում

1921 թ. փետրվարի 21-ին Գորիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցում՝ հանդիսավոր իրադրության մեջ, օծվել էր սպարապետին հանձնվող գոտին և եռագույն դրոշը, որը դարձյալ նա էր ընդունել:

«Հայ ժողովուրդը,- ասված է կոչում, կառավարությունը՝ ժողովրդի անունից, սպարապետին հանձնելով ազատ Սյունիքի դրոշակը, դրա հետ մեկտեղ հանձնել է և «մեր քաղաքական բախտը», համոզված լինելով, որ, ինչպես մինչև այսօր, այսուհետև ևս, նա կշարունակի «փառավոր հաղթություններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը, տոգորված ազատ և անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է զոհաբերել այն ամենը, ինչ հարկավոր կլինի հասնելու ցանկացած նպատակին»[17]:

Հավանորեն, այս համագումարի մասին է խոսվում, չնայած փաստաթղթում նշվում է որպես 2-րդ համագումար, Կարմիր բանակի գրանցման բաժնի 1921թ. փետրվարի 11-ի՝ Զանգեզուրի շրջանին վերաբերող հետախուզական ամփոփագրում: «Գործակալական տվյալները,- ասվում է ամփոփագրում,- հաստատում են, որ կազմավորվել է պառլամենտ՝ նախագահությամբ հայտնի ավանտյուրիստ, ուսուցիչ Գեդեոնի: Զինվորական մինիստր է նշանակվել Նժդեհը: Իրադարձությունների ընթացքին տոն է տալիս Հայաստանի նախկին դաշնակցական զինվորական մինիստր Ռուբեն փաշա Տեր-Մինասյանը: Համագումարում ընդարձակ զեկուցում է արել Նժդեհը և ասել, որ գարնանը Կարմիր բանակն անպայման կձեռնարկի իր խմբի վերացումը և հրավիրել է ներկաներին՝ արտահայտել իրենց վերաբերմունքը: Եղել է նաև Կարմիր բանակին հանձնվելու առաջարկություն, քանի որ նա **կարողացել է պարտության մատնել Կոլչակին,** Դենիկինին և Վրանգելին»[18]:

Խորհրդային Ադրբեջանը ուշադրությամբ հետևում էր Զանգեզուրի իրադարձություններին, որին տիրելու նրա փորձերը մատնվել էին անհաջողության: 1921թ. փետրվարի 15-ին Շուշիի հեղկոմը Ն.Նարիմանովին (Օրջոնիկիձեի համար) ուղարկած գրության մեջ հայտնում էր, թե Զանգեզուրից Կարմիր բանակի հեռանալուց հետո /խոսքը 1920 թ. նոյեմբերին Զանգեզուրում Կարմիր բանակի կրած խայտառակ պարտության մասին է/ Ղարաբաղի քաղաքական դրությունն ավելի է վատթարացել: «Այդ կապակցությամբ Զանգեզուրի դաշնակցականները կազմակերպել են գյուղացիական խորհուրդ, «Ինքնավար կառավարության» գլխավորությամբ /հասկանալ 1-ին համագումարը-[19] և, զգալով մեր թուլությունը, որոշել են իրականացնել իրենց վաղեմի ցանկությունը՝ դաշնակցական իշխանության տիրապետությունը Զանգեզուրում և Ղարաբաղում»: Այդ նպատակով,- շարունակում է հեղկոմը,- առայժմ, հնարավորություն չունենք հարձակվել Քրդստանի ուղղությամբ, դաշնակցականները ապստամբություն են բարձրացրել Վարանդայի 2-րդ տեղամասում՝ Խանքենդի 1-ին տեղամասի հետ միանալու համար:

Սյունիքի պառլամենտը (Խորհրդարանը)

Այսպիսով, Սյունիքի ինքնավարության հռչակմամբ դրվեցին Լեռնահայաստան հայկական պետության հիմքերը: Ստեղծվեց նրա իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ <u>խորհրդարանը,</u> ի դեմս համագումարի:

Սահմանվեց նրա ձևավորման կարգը՝ 100 ծուխ ունեցող համայնքից 1, 100-200-ից՝ 2, 200-ից ավելի ծուխ ունեցող համայնքներից 3 պատգամավոր.

ա) զինվորական ընդհանուր հրամանատարի՝ սպարապետի ընտրությունը,

բ) պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, իսկ արտակարգ դեպքերում դա վերապահվում էր նաև սպարապետին,

գ) երկրի թե՛ քաղաքացիական, և՛ թե զինվորական կառավարչական ձևի հաստատումը և օրենսդրությունը:

Եթե նայում ենք հարցին պետության և իրավունքի տեսության տեսանկյունից, որ օրենսդրական իշխանության ֆունկցիան իրականացնում են պետության բարձրագույն ներկայացուցչական մարմինները, որն իրականացնում է.

ա) ֆինանսական լիազորություններ, բ) վերահսկողություն գործադիր իշխանության նկատմամբ, գ) մասնակցում է գործադիր իշխանության կազմավորմանը և այլն, ապա, ակնհայտ է դառնում, որ ինքնավար Սյունիքն արդեն ուներ պետությանը բնորոշ իր պառլամենտը:

Պառլամենտի կողմից հետևյալ կերպ էր կազմակերպվում ինքնավար Սյունիքի կառավարությունը. «Պարլամենտը ընտրում է 6 ամիս ժամանակով 9 հոգուց բաղկացած կառավարութիւն և ցրում: Մինչև պարլամենտի նոր նստաշրջանը, կառավարութեանն է անցնում այդ երկրի զինուորական և քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարութիւնը, որը և կիրառում է կեանքի մէջ, Պարլամենտից բղխած բոլոր օրէնքներն ու որոշումները:

Ծանօթութիւն. Պառլամենտը կառավարութեան անդամ կարող է ընտրել նաև ոչ պարլամենտի անդամները:

դ) Կառավարութեանն է վերապահւում զինւորական ընդհանուր հրամանատարի-սպարապետի հրաւիրումը և արձակումը:

ե) Կառավարութեանն է վերապահւում պատերազմ յայտարարելու և հաշտութեան բանակցութիւններ վարելու իրաւունքը, իսկ արտակարգ դէպքում, այդ վերապահւում է նաև սպարապետին:

զ) Երկրի թե քաղաքացիական և թէ զինւորական կառավարչական ձևերի հաստատումը և օրէնսդրությունը:

է) Կառավարութիւնը ունենում է հետևյալ վարչութիւնները 1) Ներքին-գործերի, 2) Արտաքին-գործերի, 3) Պարենաւորման, 4) Արդարադատութեան, 5) Ֆինանսական, 6) Լուսաւորութեան, 7) Արևտրա-Արդյունաբերութեան, 8) Հողային, 9) Ճանապարհների հաղորդակցութեան (պոստ, հեռագիր, հեռախոս և խճուղի), 10) Խնամատարութեան:

ը) Բոլոր խոշոր և կարևոր խնդիրները, մասնաւորապես ներքին ու արտաքին քաղաքականութեանը վերաբերող, իրենց լուծումն ստանում են ոչ թէ այս կամ այն վարիչի, այլ կառավարութեան ամբողջ կազմի կողմից:

թ) Բոլոր պատասխանատու պաշտօնեաները հաստատւում են կառավարութեան կողմից, վարիչների առաջարկութեամբ:

ժ) Զինւորական բոլոր տեսակի գործերը տարւում են սպարապետի ղեկավարութեամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում կառավարութեան»:

Այսպիսով, սահմանադրական մակարդակով կարգավորվում է նաև ոչ միայն կառավարության կազմակերպման կարգը, այլև ստույգ որոշում է նրա կարգավիճակը:

Համագումարի կողմից ստեղծվում են նաև իշխանության ու կառավարման տեղական մարմինները և որոշվում նրանց իրավասությունների շրջանակը, որոնց կանդրադառնանք հաջորդ՝ Լեռնահայաստանի հռչակմանը նվիրված բաժնում:

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Սյունիքի խորհրդարանի դիվանի հրավերով՝ 1921թ. ապրիլի 26-ին Տաթևի վանքում կայացավ Ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության 2-րդ (Արտակարգ) համագումարը, որտեղ 64 գյուղից ներկա էին 95 պատգամավոր և Սպարապետ Նժդեհը:

Օրակարգը



Համագումարը հաստատում է հետևյալ օրակարգը. 1. Ինքնավար Սյունիքի դիվանի կազմի հրաժարականը: 2. Պարենավորումը: 3. Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերամշակումը: 4. Ազատ հողերի բաշխման հարցը: 5. Պաշտոնյաների վարձատրության մասին: 6. Դպրոցական գործ: 7. Պետական հարստության պահպանության մասին: 8. Նոր կառավարության (դիվանի) ընտրություն: 9. Համագումարում հարուցվելիք խնդիրներ:

Համագումարը վարչապետ ընտրեց Նժդեհին, նրան հանձնարարելով նոր կառավարության կազմավորումը: Կառավարության անդամը կոչվելու էր նախարար[20]:

Նույն օրը պառլամենտը ողջունեց զորքին ու նրա հրամանատարներին, նրանց մաղթելով նոր հաղթանակներ[21]:

Նժդեհը, հանդես գալով զեկուցմամբ, հանգամանալից հաշվետվություն է տալիս, կատարում է Ինքնավար Սյունիքի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի բազմակողմանի ու խոր վերլուծությունը, համագումարի բերում նախորդ համագումարից հետո կատարված աշխատանքները, ժամանակների հրատապ խնդիրները: Սպարապետի սպառիչ զեկուցումից հետո, համագումարի պատգամավորներն այլևս ավելորդ են համարում լսել հաշվետու մյուս զեկուցումներն առանձին-առանձին և անցնում են մտքերի փոխանակության:

Պարենավորման հարցը

Այնուհետև քննարկվում է պարենավորման հարցը, որի մասին դարձյալ զեկուցում է Նժդեհը: Նա նկարագրում է տնտեսական ծանր կացությունը գավառում, բնակչության կրած տառապանքները, որոնք անընդհատ խորանում էին Արարատյան դաշտից եկած հազարավոր գաղթականներին կերակրելու պատճառով:

Սյունիքը հացի մեծ կարիք ուներ սկսած դեռ 1918 թվականից, երբ Անդրկովկասը մատնվել էր քաոսի, երբ ծայր էին առել հայ-ադրբեջանական և հայ-վրացական բախումները, որի հետևանքով փակվել էին ճանապարհները, և լեռնաշխարհը կղզիացել էր: Բայց, եթե 1918-1919 թվականներին վիճակն ինչ-որ կերպ տանելի էր, ապա 1920 թ. ամառվանից, սովը չոքել էր զանգեզուրցիների դռանը: Ճիշտ է, 1920-ին Կարմիր բանակի զորքերից խլած հացի պաշարները փոքր-ինչ մեղմել էին զանգվածային սովը: Նժդեհի պատկերավոր խոսքերով ասած՝ զանգեզուրցին «հաց էր ճարել իր սրի ծայրով», բայց 1921 թ. գարնանը նա նորից սոված էր:

1921 թ. գարնան ամիսներին սովի սաստկացումը երկու պատճառների հետևանք էր. ա) Սյունիք թափված բազմահազար գաղթականությունը արագորեն նվազեցնում էր զանգեզուրցիների հացի՝ առանց այն էլ խղճուկ պաշարը, բ) Արաքսի վրայով Սյունիքից դեպի Պարսկաստան կամուրջ չլինելը և այդ երկրից բավարար քանակությամբ հաց չստանալը: Աշխարհից կտրված երկրամասը դրսի օգնության որևէ հույս չուներ:

Այս պայմաններում սովը սաստկանում էր օրըստօրե, ժամ առ ժամ: Շատ գյուղերի բնակիչների միակ սնունդը դաշտերի բանջարեղենն էր և արմտիքը: «Դիրքապահ վաշտերը շատ ռազմաճակատներում ապրում էին վայրի շագանակի ալյուրից պատրաստած հացով,- նշել է Նժդեհը,- Գողթանը գործածեց անգամ կատվի և էշի միս»[22]:

Սպառվելու վրա էր ռազմամթերքը: «Նման դժնդակ պայմաններում,- ասում էր Նժդեհը,- բանակները գոնե ժամեր դիմադրելու փոխարեն, թշնամու անարգանքին են հանձնում իրենց դրոշակները, «տեղի են տալիս կառավարությունները», բայց «սյունեցին չլքեց իր վահանը», քանզի նրա մարմնում «ցեղի հրաշագործ ոգին» էր: Կրելով գերմարդկային տառապանքներ, նա, զարմանալիորեն, չէր ընկճվում, չէր թուլացնում բազուկը, շարունակում էր ամուր բռնած պահել զենքը[23]:

Համագումարին տված հաշվետվության մեջ Նժդեհը պատգամավորներին տեղեկացնում էր, որ հացի չնչին պաշարներն ինչ-որ չափով լրացնելու համար Ինքնավար Սյունիքի իշխանությունները 1921 թ. գարնանը մի շարք փորձեր են արել հաց հայթայթել հարևան ադրբեջանական թուրքաբնակ և քրդաբնակ Ավդալարի, Կուբաթլիի, Զանգելանի, Զիբրայիլի շրջաններում: Այդ նպատակով մարտի 21-ին Ադրբեջանի մոտակա գյուղերից Գորիս էին հրավիրվել երեք մարդ՝ Էյվազբեկովը՝ Էյվազլադ գյուղից, Հաջի Հաշիմը՝

Շուռնուխից և մեծահարուստ Քերբալալ Աղամամեդը՝ Մելիք-Ահմեդլի գյուղից, որոնց հետ Նժդեհը հանդիպել և առաջարկել էր համեմատաբար բարձր գներով հացահատիկ վաճառել: Սրանք համաձայնել էին, բայց վերադառնալով իրենց գյուղերը՝ ադրբեջանական իշխանությունների սպառնալիքների տակ, հրաժարվել էին կատարել տված խոստումը: Նման մեկ այլ խորհրդակցություն ապրիլի 6-ին հրավիրվել էր Ղափանի Ագարակ գյուղում, որտեղ Խոջախան, Մինջևան, Խորամա, Իսկենդերբեյլի, Դոնդարլու և այլ գյուղերից եկել էին ոչ քիչ թվով հարուստ թուրքեր՝ Շահսուվարբեկ Քալանթարովը, Բախլուլ Էֆենդի Բահչետին և ուրիշներ: Խորհրդակցությանն անձամբ եկել էր մասնակցելու Նժդեհը: Այստեղ ևս հացահատիկ վաճառելու խոստումներ էին եղել, որոնք նույնպես չէին կատարվել:

Բնակչության և զորքի պարենավորումը համարելով առաջնային, համագումարը տեղի պաշտոնյաներին ցուցում տվեց՝ խիստ կազմակերպված կատարել հացահատիկի հունձը, հացը հավաքել անկորուստ, միաժամանակ միջոցներ հայթայթել՝ Պարսկաստանից լրացուցիչ հացահատիկ կամ ալյուր ձեռք բերելու համար:

Պարենավորման խնդրի վերաբերյալ համագումարի միաձայն ընդունած հայտարարության մեջ ասված էր.

«Պարենավորման համար Սպարապետը հայտարարում է, որ մինչև նոր հունձը հնարավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության* նյութական օգնությամբ հաց ձեռք բերել և միաժամանակ, ըստ հնարավորության աշխատել կազմակերպել պետական տրանսպորտը և ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականությունից»[24]:

Այնուհետև քննարկվում է կառավարման մարմիններ կազմելու ձևի և սկզբունքների հարցը: Պատգամավորների ձայների մեծամասնությամբ, համագումարը որոշում է.

1. «Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարել անկախ պետություն և այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) և Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:

2. Քանի որ նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապետական և ժողովրդավարական, ուստի, այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ և ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:

3. Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին հետայսու անվանել նախարարներ:

4. Վարչապետ ընտրել Սպարապետին՝ նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը[25]:

** Ըստ Ս. Սիմենյանի նկատի է առնվում Ս. Վրացյանի գլխավորած Փրկության կոմիտեն*

Կառավարության կազմը

Նժդեհը համագումարի հաստատմանը գրավոր ներկայացնում է կառավարության՝ յոթ մարդուց բաղկացած հետևյալ կազմը.

1. Գ. Նժդեհ՝ վարչապետ և արտաքին գործոց նախարար, 2. Ս. Մելիք-Յոլչյան՝ ներքին գործոց, 3. Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման, 4. Բժիշկ Մ. Մինասյան՝ խնամատարության, 5. Հովհ. Տևեճյան՝ արդարադատության և լուսավորության, 6. Ավ. Օհանջանյան՝ հաղորդակցության և փոստ-հեռագրի, 7. Բժիշկ Ս. Եղիազարյան՝ ֆինանսների նախարար:

«Համազանգեզուրյան Տաթևի 2-րդ Խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անհաղթահարելի և տոկուն բանակի ռազմիկներին և լիահույս է, որ այդ անհաղթ բանակը, որ մինչև օրս իր փառապանծ հաղթանակներով աշխարհն է զարմացրել, այսուհետև էլ պատրաստ կը լինի նոր հրաշքներ, նոր զարմանքներ ցուցադրելու քաղաքակիրթ աշխարհին, իր կատարյալ և վերջնական հարվածը տալով հայ աշխատավորության թշնամիներին:

Կազմված է կառավարություն:

Մեր ինքնավար Սյունիքն այսուհետև կոչվելու է Լեռնա-Հայաստան, որն իր քաջարի զորքով, իր անպարտ առյուծասիրտ մարտիկներով սպառնալիք պետք է լինի մեր բոլոր թշնամիների համար[26]:

Մեր ազատարար սպարապետ Նժդեհին տրված է զորավարի տիտղոս և «Խուստուպյան արծիվ» շքանշան:

Այս սուրբ տաճարում նա ուխտեց և իր սրբազան խոսքն ասաց ձեզ հետ միասին, սև օրվա համար հայության բաժին համարված Սյունիքը դարձնել հայության վերածնության օրրան»[27]:

1921թ. մայիսի 1-ին Լեռնահայաստանի կառավարությունը Գորիսում հանդես եկավ Դեկլարացիայով: Կառավարությունը հայտարարում էր, որ «իր առաջնակարգ պարտքն է համարում լարել երկրի բոլոր ուժերը՝ զորացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանության ռազմական կորովը. Լեռնահայաստանը պետք է լինի ամուր հենակետ՝ մոտ ապագայում Մայր Հայաստանը թշնամի տարրերից ազատելու համար»[28]:

Կառավարությունն իր կարևորագույն խնդիրներից էր համարում պարենավորման գործի արմատական բարելավումը, գյուղացիական տնտեսությունների արագ զարգացումը: Միաժամանակ, ազդարարվում էր կառուցել իրավական պետություն՝ «մոտեցնելով ժողովրդին և մատչելի դարձնելով դատավարությունը, զարկ տալ ժողովրդի լուսավորության գործին՝ կազմակերպելով նորանոր դպրոցներ, անգրագետների դասընթացներ, դասախոսություններ, զրույցներ, երեկույթներ և տարածելով գրավոր հրատարակություններ: Կառավարությունը ջանք չի խնայելու հանրային առողջապահությունը և բժշկական օգնությունը դնելու ավելի լավ հիմքերի վրա»[29]:

Կառավարությունը վստահ էր, որ ժողովրդի միակամ աջակցության պայմաններում, ինքը կարող է կատարել իր առաքելությունը: «Լիահույս լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը և պարտաճանաչ պաշտոնեությունը ոչ մի ջանք չեն խնայի ընդառաջ գնալու և բոլոր ուժերով աջակցելու կառավարությանը՝ համագումարի կողմից նրա վրա դրած պարտականությունները կատարելիս, նաև վստահ լինելով, որ Սյունյաց Աշխարհի հերոսացած Դավիթբեկյան զորքերը՝ միացած բուն Հայաստանի զորամասերի հետ, նորանոր սխրագործություններով պիտի զորավիգ հանդիսանան կառավարությանը, իրենց Սպարապետի ղեկավարությամբ՝ Լեռնահայաստանի կառավարությունը ստանձնում է երկրի ծանր ղեկը»[30]:

Նժդեհը նշում էր, որ Լեռնահայաստանի ստեղծման նպատակը «ոչ թե Սյունիքի անկախ գոյությունը երկարացնելն էր», «այլ որպեսզի այդ ապստամբ երկրամասին հնարավորություն տրվեր մի որոշ ժամանակով ևս դիմագրավելու իրեն օղակող թշնամիներին», մինչև որ Երևանից փախչող հայ մտավորականությունը, երկրից հեռացող արևմտահայ զորամասերը, սպայության մեծագույն մասը, խմբապետների մի որոշ մասը անցնեն Պարսկաստան»[31]:

Երկրորդ համագումարի անհրաժեշտությունը բացատրել է Նժդեհը, ըստ որի, այն ուներ ոչ այնքան գործնական, որքան բարոյական նշանակություն: «Երևանյան գաղթի առաջացրած բարոյալքումից հեռու պահելու համար՝ պետք էր մի նոր ժեստով գոտեպնդել տեղական ժողովուրդը: Եվ այդ ոչ թե միայն անկախ Հայաստանի գաղափարն ապրեցնելու համար, այլև, որպեսզի հոգեբանական հնարավորություն տրվեր Սյունիքի հայությանը մի որոշ ժամանակով ևս դիմագրավելու իրեն օղակող ռուս և թուրք հորդաներին, մինչև որ մազապուրծ եղած հայ մտավորականությունը կանցներ Պարսկաստան: Երևանի առաջին անկմամբ ստեղծված ծանր դրությունը փրկել էր Ինքնավար Սյունիքը: Նրա երկրորդ խորհրդայնացմամբ առաջացած աղետալի դրությունը պիտի փրկեր անկախ Լեռնահայաստանը, որը, փաստորեն, գոյություն ուներ Ղարաբաղի և Վայոց Ձորի գրավման օրերից»[32]:

Համագումարի ավարտից մի քանի օր անց հրապարակվեց «Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիան», որում շարադրված էին նրա խնդիրները ներքին կյանքում և արտաքին հարաբերություններում[33]:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԵՐԸ

Երևանում ապստամբության պարտությունից ու նահանջից հետո, Զանգեզուրի համար ստեղծվել էր ճգնաժամային իրադրություն: Ոչ միայն երկիշխանությունն էր խանգարում գործերին, այլև միիշխանության դեպքում նույնպես գոյատևումը, փաստորեն, ապագա չուներ: Իշխանության կամ իշխանությունների համար հետապրիլյան ծանր դրությունը վկայում է միայն այն մասին, որ պետք էր կանխել գաղթը, և, որպես դրա հետևանք, Զանգեզուրի Հայաստանին միանալու հետագա ձգձգումը:

Չնայած պետականության այս արտաքին էական բոլոր նշաններին, նրա իրական դրությունը ծանր էր և գնալով ավելի էր ծանրանում: Երևանից հազարավոր մարդկանց գաղթը անլուծելի խնդիրներ ստեղծեց տնտեսական բնագավառում: Հացի խիստ պակասը չէր թուլանում Պարսկաստանից ստացվող չնչին միջոցներով: Ինչ վերաբերում է արտաքին դրությանը, ապա, քաղաքացիական պատերազմի ավարտից և խորհրդային իշխանության Երևան վերադառնալուց հետո, այն նույնպես ծանրացավ, ուժեղացավ ճնշումը նրա վրա եւ խաղաղ, եւ ոչ խաղաղ միջոցներով՝ թե Խորհրդային Հայաստանի, եւ թե Կարմիր բանակի կողմից: Այժմ գերապատվությունը տրվում էր խաղաղ միջոցներին՝ բանակցություններին:

Լեռնահայաստանի իշխանությունները Գորիսում կազմակերպել էին Հայաստանի անկախության Մայիսի 28-ի տոնակատարությունը:

«1921թ. այդ գարնանային օրը,- նկարագրել է տոնակատարությունը Նժդեհը,- եռագույնը դեռևս ծածանվում էր մեր հայրենիքի լեռնային երկրամասի վրա: Նրա մայրաքաղաք Գորիս էին ժամանում Զանգեզուրի /Գորիսի/, Տաթևի ու Դարաբասի շրջանների ժողովրդական վաշտերը, բազմահազար ժողովուրդը: Ես այդ օրը տեսա Սյունիքը, իր ույժի, փառքի ու մեծության մեջ: Նա հպարտ էր, որովհետև պարտության էր մատնել Ադրբեջանը, ջարդել տաճիկ գնդերը, զինաթափել բոլշևիկյան 11-րդ զորաբանակը: Նա հպարտ էր, որովհետև հերոսական շարժումով հետ էր մղել դեպի հայ մտավորականությունը երկարող խորհրդային մահաբեր տապարը: Նա հպարտ էր, որովհետև իր մեջքը փրկության կամուրջ էր դարձրել նահանջող բյուրոց համար՝ դեպի Պարսկաստան»[43]:

Նժդեհը, միաժամանակ, խոստովանում է այն «ողբերգության գիտակցության» մասին, որ տոնական այդ օրը սյունեցու դեմքին կկարդար ծանոթ աչքը: Նա նկատի ուներ փամփուշտի ու հացի բացակայությունը, որը հնարավորություն չէր տալիս օգտվելու նվաճած հաղթանակից:

«Իրերի այս ողբերգական վիճակում,- եզրափակում է Նժդեհը,- մեր անկախությունը պիտի ապրեր երկու ամիս ևս, որից հետո խորհրդային կարմիր լաթը, առանց հաղթանակի, չարատառորեն պիտի ծածանվեր և Սյունյաց աշխարհի վրա»[44]: «Այդ օրը Նժդեհը հարգանքի իր հարկը կբերե զենքի իր

ընկերներին, որոնք, կառչած Սյունիքի անմատչելի լեռներին, իրենց մասնակցությունն էին բերած Լեռնաշխարհի հայության ինքնապաշտպանության գործին»: Գնդապետի աստիճան շնորհվեց Նարինյանին / գլխավոր շտաբի պետ/, փոխգնդապետի աստիճան Մելիք-Օհանջանյանին, Ամիրջանյանին, Թորոսյանին, Ամիրխանյանին և Գրիգորյանին: Բարձրացվեցին նաև այլ սպաների զինվորական աստիճանները[45]:

Նժդեհը գրում է. «Երկրորդ Հայաստանի գոյությունը չէր կարող մարսել Մոսկվան, նա վախ ուներ, որ Հանրապետական Հայաստանը կարող է հենարան դառնալ ամբողջ Անդրկովկասի հակասովետական շարժումների համար և որ դա կարող է թևավորել Ադրբեջանի և Վրաստանի դժգոհ տարրերին և նրանց ևս հանել խորհրդային իշխանության դեմ: Ահա թե ինչու նա սկսեց հավաքել իր բովանդակ ուժերը և պատրաստվել կռվի: Պետք էր տապալել «Երկրորդ Հայաստանը»: Եթե նորեն կարիք զգացվեր, բոլշևիկներին օգնության պիտի կանչեին քեմալական զորքը»[46]:

Հավաստիանալով, որ բոլշևիկյան Հայաստանի նոր ղեկավարությունը՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ, Զանգեզուրը՝ Մոսկվայի համաձայնությամբ, իրոք, թողնելու են Հայաստանի կազմում, անհնարին համարելով կռվել կարմիր բանակի գերազանցող ուժերի դեմ և չուզենալով ավելորդ զոհեր տալ ու հետագա պայքարով սովի մատնել Զանգեզուրը, Նժդեհը դադարեցրեց պայքարը և հեռացավ Զանգեզուրից:

1921 թ. հունիսի 7-ի Խորհրդային Հայաստանի Հեղկոմին հղած իր նամակում նա հետևյալ պայմաններն է դնում.

«Դուք գիտեք,- նշում է Նժդեհը,- որ ցանկութեան դէպքում, ես միշտ էլ հնարաւորութիւն կունենամ մի քանի տասնեակ զինուորներով վերականգնել Լեռնահայաստանը: Որպէսզի այս երկրի աշխատավոր գիւղացիութիւնը ստիպուած չլինի մէկ էլ ինձ օգնութեան կանչելու. աշխատէք բաւարարել հայ գիւղացիութեան և նրա մտավորականութեան արդար պահանջը»[47]:

Նժդեհին հղած իր գրությամբ ՀՀ հեղկոմը, փաստորեն, համաձայնում է նրա պահանջներին՝ թեեւ ինչպես իր բազմաթիվ գրավոր պարտավորությունները, այնպես էլ այս մեկը, քարոզչական նպատակով արված սուտ հայտարարություն էր, ուստի, մնաց թղթի վրա:

«Ինչու՞ պայքարեց Լեռնահայաստանը» հոդվածում[48] Նժդեհը լուսաբանել է մի շարք հարցեր՝ ինչու՞ Լեռնահայաստանը կռվի բռնվեց, ու՞մ դեմ և ինչի՞ համար էր պայքարում երկրամասը, ե՞րբ և ինչպիսի՞ պայմաններում դադարեցրեց դիմադրությունը և այլն:

Նժդեհը փաստեր է բերել նաև այն մասին, թե Ադրբեջանը, նաև Խորհրդային, ինչպես չէին թաքցնում Զանգեզուրն ու Ղարաբաղը իրենց միացնելու ցանկությունը: «Զանգեզուրի կոմունիստ» թերթը 1920 թ. նոյեմբերի 20-ին տպագրել է «թռուցիկ-գրություն», որում նշվում էր, թե ռազմակցականները և ուրիշներ «տենդորեն աշխատում են Խորհրդային Ադրբեջանի գավառներում ապստամբություն առաջացնել»: Ապստամբությունը վերագրելով նաև

Զանգեզուրին, Նժդեհը գրում է. «Սյունիքը անվերապահորեն հայտարարված էր «Խորհրդային Ադրբեջանի գավառ» և նրա անբաժան մասը»: Նժդեհը հիշեցնում է նաև Ղափանի շրջանի և Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցիչների 1920 թ. հուլիսի 11-ի հանդիպման արդյունքների մասին, երբ վերջիններս հայտարարել էին, թե եկել ենք Զանգեզուրն ու Ղարաբաղը կցելու Խորհրդային Ադրբեջանին և զինաթափելու ժողովրդին:

ՀՀ նախարարական խորհրդին և կուսակցական դատարանին ներկայացրած բացատրագրերում (1921 թ. օգոստոս) Նժդեհը հանգամանորեն վերլուծել է նաև Զանգեզուրի պարտության պատճառները: Նա հիմնականում կանգ է առել այն բացասական հետևանքների վրա, որ ունեցավ Երևանի ապստամբ ուժերի և մեծաթիվ գաղթականության նահանջը և հայտնվելը Զանգեզուրում: Խիստ ընկավ երկրամասի պաշտպանների մարտունակությունը և բարոյական ոգին: Ուժեղացավ սովը: Սրվեցին հակասությունները ղեկավարների միջև (տեղական և երևանյան) և այլն[48]:

Պարտության մասին նույնպիսի բացատրություն է տալիս Հովհ. Քաջազնունին: Ապստամբների նահանջի հետևանքով, Դարալագյազում և Զանգեզուրում ստեղծված վիճակի մասին նա հայտնում է, որ այն «պայքար չէ այլևս, այլ՝ հոգեվարք»: «Մենք կարծում էինք,- շարունակում է Քաջազնունին,- թե անցնելով Լեռնահայաստան, կուժեղացնենք տեղացիներին... Հաշվի չէինք առել, որ պարտված, կազմալուծված ու նահանջի ճամփան բռնած խմբերը, և մանավանդ սարսափահար ամբոխը, կարող են առաջ բերել միայն լքում ու հուսահատություն... Մարտական թափը հալչում էր ու պակասում օր-օրի վրա... Տեղացիները տեսնում էին զորքի քայքայված վիճակը, տիրող անիշխանությունն ու կասկածում էին իրենց կատարյալ անզորության վրա՝ շեմքի վրա կանգնած բոլշևիկների հանդեպ»[50]:

Այդ ամենը ճիշտ է: Սակայն պետք է ավելացնել և այն մասին, որ խորհրդային ուժերին դիմադրելը, անկախ Զանգեզուրում չէր կարող երկար շարունակվել: Մի կողմից այն պատճառով, որ Կարմիր բանակը դիմում էր վճռական գործողությունների, մյուս կողմից, արդեն կասկած լինել չէր կարող այն մասին, որ Զանգեզուրը կմիացվի Հայաստանին:

Զանգեզուրյան կռիվը, միաժամանակ, նաև հակաբոլշևիկյան էր, ուստի, բնականաբար, որոշակի իմաստով՝ նաև դասակարգային: Եվ պատահական չէ, որ ամփոփելով Սյունիքում իր վարած երկու տարվա կռիվները, նա գրում է.

«Երկու տարի տևող կռիվների առաջին շրջանում պէտք է թրքո-թաթար վտանգից փրկել Սիւնիքի հայութիւնը: Երկրորդ շրջանում - Ինքնավար Սիւնիքի օրով - պէտք էր մահացու անդամահատութիւնից փրկել Հայաստանը [նրան կցելով] Մոսկուայի կողմից Ադրբէյջանին տրուած Սիւնեաց երկիրը:

Երրորդ շրջանում - Լեռնահայաստանի օրով - պէտք էր հոգեբանօրէն հրահրել և ռազմագիտօրէն կարելի դարձնել Հայաստանի փետրուարեան ապստամբութիւնը, ապա փրկութեան կամուրջ հանդիսանալ բոլշևիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտաւորականութեան համար»[51]:

Զանգեզուրի գոյամարտի հանրագումարի և դասերի մասին անգնահատելի ուսումնասիրություն է կատարել Ա. Սիմոնյանը:

Զանգեզուրը խորհրդայնացվեց և միավորվեց Խորհրդային Հայաստանին: Դա Սյունիքի անձնազոհ զավակների պայքարի արդյունքն էր: Գոյամարտը արգելք եղավ գավառը Ադրբեջանին ենթարկելու բոլշևիկների նկրտումներին: Սա էր Նժդեհի գլխավորությամբ զանգեզուրյան զինյալների մղած հերոսական կռիվների գլխավոր հանրագումարը: Դա թափած արյան արժանի հատուցումն էր: Զանգեզուրի 1920-21թթ. գոյամարտը թողել է նաև ուսանելի դասեր:

Հայրենի երկրում ապրող հայությունը գտնվում է աշխարհաքաղաքական բարդ ու վտանգավոր տարածքում, մի բան, որ Հայաստանի Հանրապետության իշխանություններին և քաղաքական ուժերին պարտադրում է վարել այդ իրողություններից բխող, բազմակողմանիորեն հիմնավորված ներքին ու արտաքին քաղաքականություն:

Երկրի ներքին քաղաքականության մեջ կարևորվում են մի շարք հանգամանքներ:

1.Հասարակական բոլոր արժեքներից (ազգ, դասակարգ, կուսակցություն) ամենամնայունը ազգն է, որի վրա, որպես անկյունաքարի, պետք է խարսխված լինի հայոց պետական գաղափարախոսությունը: Պետական կամ ազգային գաղափարախոսության մեջ ձևակերպվում են այն գլխավոր նպատակներն ու իղձերը, որոնց իրականացմանը պետք է ձգտի ամբողջ ազգը:

2. Հայաստանը պետք է ունենա այնպիսի տնտեսական համակարգ, որը նպաստի երկրի բոլոր մասերի տնտեսական հզորացմանը: Առանձնահատուկ ուշադրություն են պահանջում հանրապետության այն շրջանները, որոնք սահմանակից են Թուրքիային և Ադրբեջանին: Այդ շրջանների թվում, բնականաբար, առանձնանում է Սյունիքը՝ Հայաստանի համար իր կարևորագույն ռազմաստրատեգիական նշանակությամբ:

Զանգեզուրը Հայաստանի համար պետք է դառնա նախընտրելի բնակության վայր՝ բազմամարդ բնակչություն և պաշտպանական հզոր հնարավորություններ ունեցող անընկճելի մի միավոր:

3. Հայերը մշտապես պետք է հիշեն, որ իրենց երկրի, իրենց քաղաքակրթության գոյության հիմնական երաշխիքը և ժողովրդի անվտանգության գլխավոր պայմանը ուժեղ բանակ ունենալն է:

4. Զանգեզուրի 1920-21թթ. իրադարձությունները եկան ապացուցելու, որ պատերազմի ելքը կախված չէ միայն կռվող կողմերի զինվորների թվից, ռազմական առկա տեխնիկայից, տնտեսական հնարավորություններից: Զանգեզուրյան գոյամարտը, իսկ հետագայում պատերազմը նույնպես, ցույց տվեցին, որ պակաս կարևոր չէ կռվողների բարոյական ոգին, նրանց հայրենասիրությունը, անհուն նվիրվածությունն իրենց հայրենիքին ու ժողովրդին[52]:

Զանգեզուրյան գոյամարտը այն ճշմարտության հաստատումն է, որ ազգային շահերի գերակայությունը բացարձակ է: Իսկ հայ ժողովրդի գոյատևման ու բարգավաճման հայկական պետականության համար այն ամենակարևոր երաշխիքն է:

Լեռնահայաստանի հայկական պետության բնորոշ հատկանիշները

Գարեգին Նժդեհ

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Սյունիքի ինքնավարության հռչակմամբ դրվեցին հայկական նոր առանձին ու անկախ պետության ստեղծման հիմքերը: Եվ վերջապես, թեկուզև մի կարճ ժամանակահատվածում, Լեռնահայաստանի անկախության հռչակմամբ կայացավ հայկական պետականության մի ուրույն միավոր՝ Լեռնահայաստանը:

Նպատակահարմար է գտնում ներկայացնել գիտնական-իրավաբան Մարտին Զիլֆուղարյանի տեսակետը Լեռնահայաստանի հայկական պետության բնորոշ հատկանիշների մասին:

«Եթե ելնում ենք պետության հասկացության ընդհանուր սահմանումից այն է. **Պետությունը**- հասարակության միասնական քաղաքական կազմակերպություն է, որն իր իշխանությունը երկրի տարածքի սահմաններում տարածում է ողջ բնակչության վրա, հրապարակում է իրավաբանական համապարտադիր նորմեր, ունի կառավարման և հարկադրանքի հատուկ ապարատ, օժտված է ինքնիշխանությամբ[53], ակնհայտ է դառնում, որ Լեռնահայաստանն ուներ պետությանը բնորոշ բոլոր հատկանիշները:

Պետության հասկացության սոցիոլոգիական բնորոշման ներկայացուցիչները առանձնացնում են նրա երեք հատկանիշներ. **1) մարդկանց ամբողջությունը՝ ժողովուրդ: 2) Նրանց վրա գերիշխող իշխանությունը: 3) Տարածքը, որպես այդ իշխանության գործողության սահման:** Իրենց փոխկապակցության մեջ այս հատկանիշները կազմում են պետության հասկացությունը որպես որոշակի տարածքի սահմաններում մեկ իշխանության ներքո մարդկանց ամբողջություն[54]:

1. Լեռնահայաստանը, ի դեմս համագումարի իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնի՝ պառլամենտի և նրա կողմից ստեղծված մյուս մարմինների, ուներ երկրի ամբողջ մասշտաբով քաղաքական իշխանության միասնական տարածքային կազմակերպություն:

2. Պետականորեն հաստատված էին նրա սահմանները, որով նա բաժանվում էր մյուս պետություններից, ինչպես նաև կատարված էր նրա ներքին կառուցվածքի բաժանումը:

3. Լեռնահայաստանն իր սահմանների շրջանակում օժտված էր տարածքային գերակայությամբ, այսինքն՝ առկա էր նրա օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միասնականությունն ու լիիշխանությունը բնակչության նկատմամբ, որը բացառում էր օտարերկրյա իշխանության միջամտությունը:

4. Ստեղծվել էր հասարակության կառավարման հատուկ ապարատը՝ կառավարությունը (գործադիր իշխանությունը):

5. Կազմավորվել էր դատական իշխանությունը՝ հարկադրանք, այդ թվում նաև պատժամիջոցներ իրականացնող մարմինները՝ բանակը, ոստիկանությունը, բանտային և ուղղիչ-աշխատանքային հիմնարկները:

6. Իրավական սկզբունքներով էր կազմակերպում հասարակական կյանքը: Հրապարակում էր կարգադրեր, որոնք պարտադիր ուժ ունեին ողջ բնակչության համար:

7. Լեռնահայաստանը ինքնիշխան էր, քանի որ նրա իշխանությունը ածանցված կամ տրված չէր որևէ այլ պետության կամ մարմնի կողմից, այլ նրա ինքնիշխանությունը տրված էր իր տարածքի ազգաբնակչության կողմից, որը համընկնում էր ժողովրդի ինքնիշխանության հետ և սերտորեն կապված էր ազգային ինքնիշխանության հետ:

Լեռնահայաստանը, ըստ էության, պառլամենտական հանրապետություն էր:

Դեռևս Համազանգեզուրյան համագումարի որոշումների արձանագրության մեջ ուղղակի շեշտվում է. «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ[55]», որն անկախ էր մնալու անորոշ ժամանակով:

Այդ համագումարով որոշվում են նաև պետության սահմանները. «Ինքնավար Սյունիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները[56]»:

Պառլամենտը ընտրում է կառավարություն 6 ամսով և ցրում: Այն, ըստ էության, հանդիսանում է գործադիր իշխանության կրողը՝ կառավարման բարձրագույն կենտրոնական մարմինը: Սահմանված էր նրա կազմը, իրավասությունների շրջանակը և պարտականությունները:

Համագումարի որոշմամբ ստեղծվում են կառավարման տեղական մարմինները. «Շրջանային գործադիր մարմինների կազմը, ընտրությունը և նրանց իրավասության սահմանները[57]»:

Սահմանվում են գավառապետների, շրջանային կոմիսարների և գյուղա-

կան կոմիսարների նշանակման կարգն ու կարգավիճակը:

Պառլամենտի կողմից սահմանվում են նաև հանրապետության միջազգային հարաբերությունների շրջանակները[58]:

Մարքսիստական հայեցակետը առանձնացնում է պետական-կազմակերպված հասարակության բնորոշ հետևյալ ընդհանուր հիմնական հատկանիշները.

1. Պետության հպատակների բաժանումով՝ ըստ տարածքային միավորների:

2. Հատուկ հրապարակային իշխանության հաստատումը, որն այլևս անմիջականորեն չի ընդհանրանում բնակչության հետ:

3. Պետական իշխանության ապարատը պահպանելու համար բնակչությունից հարկերի գրանցումը և նրանից փոխառություններ ստանալը:

Ինչպես տեսնում ենք, բերված հատկանիշները նույնպես բնութագրական են Լեռնահայաստանի համար:

Լեռնահայաստանը ժողովրդավարական պետություն էր, այսինքն՝ մի «պետություն, որը, կապված լինելով օրենքների հետ, ապահովում է մարդու իրական իրավունքներն ու ազատությունները[59]»:

Պետական իշխանությունը հիմնված է ժողովրդի կամքի վրա, որը գերիշխող է: Ըստ Պիդրոյի «միայն ազգն է իսկական գերիշխող, իսկական օրենսդիր կարող է լինել ժողովուրդը, միայն ժողովրդի կամքն է քաղաքական իշխանության աղբյուրը[60]»: Այո՛, Լեռնահայաստանի պետության դեպքում նույպես Սյունիքի ժողովրդի կամքն էր քաղաքական իշխանության աղբյուրը[61]»:

Ահա այսպիսի ժողովրդավարական պետություն էր Լեռնահայաստանը, որի եռամյա հերոսական պայքարի շնորհիվ է, որ այսօր Սյունիքը գտնվում է Հայաստանի կազմում, այլապես նա պետք է կիսեր Արցախի ճակատագիրը և, լավագույն դեպքում, Կավբյուրոյի կողմից տրվեր Ադրբեջանին: Իսկ եթե չլիներ Զանգեզուրը, վաղուց հայաթափ կլիներ նաև Արցախը:

Հետաքրքիր է նաև մի օրինաչափություն, որ Սյունիքի հայեցի անկախությունը միշտ ձեռք է բերվել համառ պայքարով ու ինքնազոհ նվիրվածությամբ մեր մեծագույն զորավարների՝ Դավիթ-Բեկի, Նժդեհի գլխավորությամբ:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԻՆՔՆԱՎԱՐ ՍՅՈՒՆԻՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԵՐԸ»

Սահմանադրության հասկացությունը

Սահմանադրությունը, որպես իրավական ակտ, ժամանակակից ժողովրդավարական պետության իրավունքի համակարգում զբաղեցնում է ինքնուրույն և հատուկ տեղ, որը մյուս բոլոր իրավական ակտերից տարբերվում է մի շարք բնորոշ գծերով:

Եթե ընդհանուր ձևով փորձենք համակարգել այդ գծերը, ապա կարելի է ասել, որ **սահմանադրությունն այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության իրավունքի ողջ համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու. մի կողմից՝ մարդու և հասարակության, մյուս կողմից՝ մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները՝:**

Բերված սահմանումից երևում է, որ՝ ա) սահմանադրությունը նորմատիվ ակտ է, բ) այն ունի բարձրագույն իրավաբանական ուժ իրավական մյուս ակտերի նկատմամբ և գ) ունի հատուկ կարգավորման առարկա:

Սահմանադրության հասկացությունը ճիշտ ընկալելու համար փորձենք պարզաբանել սահմանադրության նշված հատկանիշների յուրաքանչյուրի բովանդակությունը և համեմատել Լեռնահայաստանի Սահմանադրության հետ:

Սովորաբար պետության իրավունքի համակարգը ներառում է տվյալ պետության մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը, ժողովրդի անմիջական կամարտահայտությամբ (հանրաքվեով) ընդունված ակտերը, ինչպես նաև նրա (պետության) կողմից վավերացված միջազգային պայմանագրերը:

Պետական յուրաքանչյուր մարմնի գործունեությունը, որպես կանոն, իրականացվում է համապատասխան իրավական ակտեր ընդունելու ձևով: Պետության իրավունքի համակարգը կազմող բոլոր այդ իրավական նորմերը, ելնելով դրանց իրավաբանական ուժից և այն ընդունող մարմնի տեղից պետական մարմինների համակարգում, բաժանվում են երեք մեծ խմբերի: Դրանք են՝ 1) օրենքներ, 2) ենթաօրենսդրական ակտեր և 3) միջազգային ակտեր:

Սակայն անկախ այն բանից՝ պետությունը ունիտար է, թե դաշնային և

---

1 ՀՀ Սահմանադրական իրավունք, Երևան, 2007 թ. էջ 37:

նրա օրենքների համակարգն ինչպիսի անվանումներով օրենքներ է պարունակում, գործում է բոլոր պետությունների համար պարտադիր մի կանոն. բոլոր օրենքների, ուրեմն և պետության ողջ իրավունքի համակարգի բուրգի գագաթին գտնվում է Սահմանադրությունը: Խնդիրն այն է, որ, որ Սահմանադրությունը, որպես իրավական ակտ, մյուս բոլոր իրավական ակտերից տարբերվում է մի շարք հատկանիշներով:

Առաջին, սահմանադրությունը ժամանակակից իմաստով, ի տարբերություն մյուս իրավական ակտերի, **ընդունվում է ժողովրդի կողմից կամ նրա անունից:**

Սահմանադրության մեջ պետք է ամրագրվի ողջ ժողովրդի կամքը որպես բարձրագույն իշխանության և նրան պետք է տրվի բարձրագույն իրավաբանական ուժ: Այդ միտքը միջնադարում ժան ժակ Ռուսոյի կողմից ձևակերպվեց որպես **հասարակական դաշինքի** տեսություն, համաձայն որի՝ սահմանադրության ստեղծման համար անհրաժեշտ է բոլոր քաղաքացիների համաձայնությունը:

Սահմանադրության այս էական հատկանիշն ընդունելի է նաև ժամանակակից ժողովրդավարական երկրների սահմանադրական պրակտիկայում, որն իր արտացոլումն է գտնում, մասնավորապես, նրանց սահմանադրությունների նախաբաններում (պրեամբուլա):

Սահմանադրություններն ընդունվում են ոչ միայն ժողովուրդների կողմից, այլ նաև **ժողովրդի անունից**՝ նրա կողմից ազատ ընտրությունների միջոցով ձևավորված կառույցների (խորհրդարան, կոնվենտ, սահմանադիր ժողով և այլն) միջոցով:

Երկրորդ, ժողովրդի կողմից ընդունելու հանգամանքը պայմանավորում է սահմանադրության հաջորդ կարևոր առանձնահատկությունը՝ **նրա հիմնարար բնույթը:** Ժողովրդավարական պետություններում ժողովուրդն ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրն է: **Միայն ինքնիշխան ժողովուրդն է իրավասու սահմանադրության ընդունման և դրա մեջ փոփոխություններ կատարելու ճանապարհով սահմանելու և փոփոխելու հասարակության և պետության կառուցվածքի հիմունքները**[1]: Սահմանադրության աշխարհ գալու պահից սահմանադրություն ունեցող բոլոր երկրների հասարակական և պետական կառուցվածքի հիմնախնդիրներն իրենց սահմանումն ու փոփոխումն են ստացել սահմանադրական ամրագրման ճանապարհով: Այդ մասին է վկայում Ինքնավար Սյունիքի 1920 թ-ի Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության 1995 թվականի և ժողովրդավարական այլ երկրների սահմանադրությունները:

Սահմանադրության հիմնարար բնույթն արտահայտվում է նաև նրանում, որ **դրա հանձարարակաները նախահիմք են համարվում բոլոր տեսակի իրավահարաբերությունների կարգավորման համար:** Այդ է պատճառը, որ

1 ՀՀ Սահմանադրական իրավունք, Երևան, 2007 թ. էջ 40:

ինչպես օրենքները, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սահմանադրության հիմքի վրա և չպետք է հակասեն դրան:

Երրորդ, սահմանադրության կարևոր առանձնահատկություններից է, նրա **յուրահատուկ կարգավորման առարկան,** այսինքն՝ հասարակական հարաբերությունների այն հատուկ բնագավառները, որոնք պահանջում են սահմանադրական կարգավորում:

Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, որոնք կյանքի են կոչվում կարգավորելու որևէ կոնկրետ բնագավառ կամ որոշակի խումբ հասարակական հարաբերությունները, սահմանադրությունն ունի կարգավորման **համապարփակ** բնույթ: Այն ընդգրկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլն, ընդ որում, կարգավորելով այդ ոլորտների առավել կարևոր, հիմնային, առանցքային հասարակական հարաբերությունները: Այդպիսիք են հանդիսանում սեփականության ձևերն ու բովանդակությունը, անհատի և պետության փոխհարաբերությունների բնույթը, պետական իշխանության պատկանելությունը և իրացման ձևերն ու կառուցակարգերը, պետության և քաղաքական կուսակցությունների: Նախորդ բաժիններից երևում է, որ Լեռնահայաստանի սահմանադրությունը նույնպես անդրադարձել է բոլոր այդ խնդիրներին:

Լեռնահայաստանի Սահմանադրության իրավաբանական բնույթը

Սահմանադրության, որպես իրավական ակտի, բնորոշ գծերի շարքում առանձնակի կարևորվում է **նրա հատուկ իրավաբանական բնույթը**:

Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը նշանակում է.

առաջին, ցանկացած իրավական ակտ, լինի օրենք թե ենթաօրենսդրական ակտ, **պետք է համապատասխանի սահմանադրությանը:**

երկրորդ, սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը նշանակում է նաև, որ պետական իշխանության (երեք թևերի) **բոլոր մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործողությունները պետք է համապատասխանեն սահմանադրությանը:**

երրորդ, սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը արտահայտում է նաև այն բանում, որ օրենքները և մյուս ակտերն ընդունվում են **սահամանադրությամբ նախատեսված մարմինների կողմից և սահմանադրությամբ նախատեսված կարգով**[1], ինչպես և նախատեսում էր նաև Լեռնահայաստանի սահմանադրությունը:

Լեռնահայաստանի Սահմանադրության էությունը

Սահմանադրության հասկացության և դրա իրավաբանական բնույթի բա-

1 Տես նույն տեղում:

ցահայտման համար կարևոր է նաև դրա էության լուսաբանումը: Այն վիճաբանությունների առարկա է հանդիսացել հենց իր՝ Սահմանադրության մասին գաղափարի ծննդյան պահից:

Սահմանադրությունը, որպես գաղափար և որպես իրավական ակտի ձև, մարդկությանը հայտնի է դաձել և նրա կողմից օգտագործվել անհամեմատ ուշ ժամանակներում, քան իրավունքի մյուս ձևերը՝ օրենքներն ու մյուս իրավական ակտերը: Վերջիններս նրա կողմից օգտագործվել են դեռևս մեր թվարկությունից առաջ՝ 4-3-րդ հազարամյակում:

«Սահմանադրություն» արտահայտությունն առաջին անգամ օգտագործվել է մ. թ. ա. IV դարում՝ հունական մեծ մտածող Արիստոտելի (384-322 մ. թ. ա.) կողմից:

Թերևս իր յուրահատկությամբ առանձնանում է V դարում Հայոց արքա Վաչագանի նախաձեռնությամբ ընդունված «Կանոնական սահմանադրությունը», որն իր նախապատրաստման և ընդունման եղանակով, հետապնդման նպատակներով և հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությամբ զգալի ընդհանություններ ունի սահմանադրության վերաբերյալ ժամանակակից պատկերացումների հետ[1]:

Պատահական չէ, որ Աղվանում ընդունված օրենքները հետագայում մտել են «Կանոնագիրք հայոց» ժողովածուի մեջ՝ որպես «Վաչագան արքայի կանոնական սահմանադրություն»[2]:

Առաջին սահմանադրական ակտերը կամ սահմանադրությունները ժամանակակից իմաստով, ի հայտ եկան XVII-XVIII դարերում, չնայած պետությունը և իրավունքը գոյություն ունեին ավելի քան 50 դար:

Ամերիկայի Միացյալ Նահանգների 1787 թ. Սահմանադրությունը (մարդկության պատմության մեջ առաջին Սահմանադրությունը) ընդունվեց առանց մարդու իրավունքների վերաբերյալ բաժնի:

Սահմանադրությունը հանդիսանում է պետության, պետականության զարգացման արդյունք և արտահայտություն: Այն հօգուտ մարդու ազատության և բարորության, կոչված է սանձելու պետական իշխանության անսահմանափակության վտանգավոր ձգտումը: Սահմանադրության խնդիրն է պետական իշխանությունը պահել քաղաքացիների տեսադաշտում, նրանց մշտական վերահսկողության ներքո:

Սահմանադրության էության վերաբերյալ գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ, որոնք, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել երկու խմբի. **մեկը՝ սահմանադրության արևմտյան հայեցակարգին հատուկ, իսկ մյուսը՝ մարքսիստական:**

Առավել տարածվածներից է բնական իրավունքի դպրոցը, որի ներկայացուցիչները սահմանադրությունը համարում են մի յուրատեսակ հասարակական պայմանագիր, որը հանդիսանում է ժողովրդի ընդհանուր կամքի, ինքնիշխանության արտահայտություն: Նորմատիվիստական դպրոցի ներկայացուցիչների կարծիքով սահմանադրությունը բարձրագույն իրավական նորմի արտահայտություն է, ըստ աստվածաբանական տեսության ներկայացուցիչների՝ բարձրագույն արդարության, բարձրագույն բանականության արտահայտություն և այլն:

Չնայած հսկայական բազմազանությանը, որ առկա է սահմանադրության էության բացահայտման կապակցությամբ արևմտյան հեղինակների մոտեցումներում, հիմնական հարցում նրանք միասնական. Սահմանադրությունը կոչված է սահմանափակելու պետական իշխանությունը և որոշելու սահմանափակման շրջանակները:

Սահմանադրության տեսակը և ձևը

Սահմանադրություններն իրենց խնդիրներով ու նպատակներով, կարգավորման առարկայով, ներքին ու արտաքին հատկանիշներով և որոշ այլ չափանիշներով նման են միմյանց և ունեն շատ ընդհանրություններ: Ներկայումս կազմավորված ավելի քան 180 պետություններից յուրաքանչյուրը ունի իր հիմնական օրենքը: Սակայն հանրահայտ է, որ պետության սահմանադրությունը պարտադիր կերպով **արտացոլում է տվյալ ժողովրդի, ազգի պատմական, մշակութային, հոգեբանական, կրոնական, սովորութային, անգամ աշխարհագրական տարածքի բազմաթիվ այլ առանձնահատկություններ: Այդպիսի տարբերիչ գծեր են համարվում պետական իշխանության պատկանելության և դրա իրացման ձևերի ու եղանակների ամրագրումը, կարգավորման առարկայի ծավալը, դրա արտահայտման ձևը, կիրառման ժամկետների տևողությունը, լեզվի և ոճի տարբերությունները, ընդունման և փոփոխման կարգը և այլն**[1]: Այդ պատճառով էլ Լեռնահայաստանի սահմանադրությունը որոշակի խմբի մեջ ընդգրկելուց առաջ անհրաժեշտ է որոշել տվյալ խմբին բնորոշ առավել ընդհանուր և կարևոր չափանիշները:

Հանրապետական սահմանադրություն:

Հայտնի է, որ յուրաքանչյուր Սահմանադրության առաջնահերթ խնդիրներից մեկը պետական իշխանության հարցն է, դրա պատկանելության և կազմավորման ձևերի և եղանակների ամրագրումը: Կախված այն բանից, թե երկրի հիմնական օրենքում ինչպես է ամրագրված պետության կառավարման ձևը, Սահմանադրությունները բաժանվում են միապետականի և հանրապետականի: Լեռնհայաստանի հիմնական օրենքը հանրապետական սահմանադրություն է:

Համազանգեզուրյան համագումարի որոշումների արձանագրության մեջ ուղղակի շեշտվում է «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ»:

1.Մանրամասն տես Կիմ Ղահրամանյան, Վլադիմիր Հովհաննիսյան, 1500-ամյա Հայկական Սահմանադրությունը: Երևան, 1999, էջ 15-16:

2.Տես Կանոնագիրք հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հատոր Ա., Երևան, 1964, էջ 69:

Ժողովրդավարական սահմանադրություն:

Հիմնական օրենքները տարբերվում են նաև ըստ նրանցում ձևակերպված քաղաքական ռեժիմների: Այդ հատկանիշների հիման վրա դրանք բաժանվում են ժողովրդավարականի և ավտորիտարի:

Ժողովրդավարական են այն սահմանադրությունները, որոնք ամրագրում են քաղաքացիների համար լայն իրավունքներ ու ազատություններ իշխանության մարմինների ընտրովիության, բազմակուսակցության և կուսակցությունների իրավահավասարություն, խորհրդարանում ընդդիմության գոյություն և այլն:

Սահամադրությունները տարբերվում են նաև ըստ գործողության ժամանակի տևողության: Այդ առումով սահմանադրությունները լինում են **ժամանակավոր և մշտական:**

Մշտական են այն սահմանադրությունները, որոնց գործողությունը սահմանափակված չէ ժամկետով:

Ժամանակավոր սահմանադրություններն ընդունվում են որոշակի ժամանակահատվածի համար կամ մինչև որոշակի դեպքի, իրադրության վրա հասնելը: Այդպիսին էր Սյունիքի սահմանադրությունը: Այսպես, Տաթի II համագումարը որոշեց՝ «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, մնալով անկախ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»:

Ըստ **ընդունման կարգի** տարբերվում են **շնորհված և ժողովրդական սահմանադրություններ:**

Ժողովրդական են կոչվում այն սահմանադրությունները, որոնք ընդունվում են ժողովրդի կողմից անմիջականորեն հանրաքվեի միջոցով կամ ժողովրդի կողմից ընտրված սահմանադրական մարմինների (խորհուրդ, կոնվենտ, ժողով և այլն) միջոցով, կամ էլ նրանց կողմից ընտրված ներկայացուցչական մարմինների՝ խորհրդարանների կողմից: Լեռնահայաստանի Հանրապետությունում սահմանադրությունը ժողովրդական էր՝, քանի որ ընդունվել էր ժողովրդի կողմից ընտրված պառլամետ-խորհրդարանի կողմից:

Ըստ փոփոխման կարգի տարբերվում են «կոշտ» և «ճկուն» սահմանադրություններ:

Կոշտ են կոչվում այն սահմանադրությունները, որոնց փոփոխության համար նախատեսված է բարդացված կարգ: Այդպիսիք են համարվում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և մի շարք այլ պետությունների հիմնական օրենքները:

Ճկուն են կոչվում այն սահմանադրությունները, որոնց փոփոխությունները կատարվում են սովորական օրենքների ընդունման ճանապարհով: Դրանց թվում է Լեռնահայաստանի Սահմանադրությունը:

Ըստ քաղաքական-տարածքային կառուցվածքի սահմանադրությունները բաժանվում են դաշնայինի և ունիտարի:

Սահմանադրության ձևը: Սահմանադրությանը հատուկ է նրա ներքին և արտաքին ձևը:

Սահմանադրության ներքին ձևն իրենից ներկայացնում է, ամենից առաջ, որոշակի եղանակների համակցություն, որոնց միջոցով ստեղծվում է սահմանադրության բովանդակությունը, ձևավորվում է դրա էությունը: Առանց արտաքին ձևի կամ բովանդակության իրացման ձևի՝ սահմանադրությունը չի կարող դրսևորվել արտաքնապես, ունենալ սահմանադրությանը հատուկ արտաքին տեսք, առանց որի, ըստ էության, սահմանադրությունը չի կարող կազմավորվել:

Սահմանադրության արտաքին ձևը կազմող տարրերի թվին են դասվում՝ ա) սամանադրության անվանումը, բ) դրա ուժի մեջ մտնելու կարգը, գ) իրացման կարգը, դ) դրա մեջ փոփոխություն կատարելու կարգը, ե) պահպանության կարգը: Այստեղ դժվար չէ նկատել, որ սահմանադրության ձևի արտաքին կողմը հանդիսանում է, մի տեսակ, նրա ներքին կողմի շարունակությունը, որով ամբողջական տեսք է ստանում սահմանադրությունը:

Դրա հետ մեկտեղ, սահմանադրությունն իր ներքին կառուցվածքով ձեռք է բերում որոշակի ամբողջականություն, երբ ձևավորվում է համապատասխան տեսքով, և ստանում հատուկ անվանում, որը նրա արտաքին ձևի տարրերից է: Սակայն հայտնի է նաև, որ սահմանադրությունն իր ներքին կառուցվածքով կարող է միասնական չլինել, հանդես գալ մի քանի իրավական ակտերի ձևով և չունենալ իր հատուկ անվանումը: **Այն սահմանադրությունները, որոնք հանդես են գալիս մեկ միասնական իրավական ակտի ձևով, ունեն իրենց հատուկ անվանումները (սահմանադրություն, հիմնական օրենք, քաղաքական սահմանադրություն և այլն) և կարգավորում են տվյալ երկրի հիմնական հասարակական հարաբերությունները,** ընդունված է անվանել գրված սահմանադրություն: Իսկ այն սահմանադրությունները, որոնք հանդես են գալիս մի քանի իրավական ակտերի տեսքով և չունեն միասնական անվանում, ընդունված է անվանել **չգրված սահմանադրություն**[1]:

Լեռնահայաստանի գրված **սահմանադրությունը** միասնական ակտ է, որի նորմերը շարադրվում են որոշակի համակարգով և համախմբվում են միմյանց տրամաբանական շարունակությունը կազմող ինստիտուտների մեջ:

Գրված սահմանադրությունը ոչ միայն միասնական ակտ է, այլև **միակը** երկրում: Լեռնահայաստանի պարագայում «Կառավարման ձևի գլխավոր գծերը» ոենց այդպիսինն է՝ միակը և միասնական: Գրված սահմանադրությունները կարգավորող հասարակական հարաբերությունների շրջանակների առումով, լինում են **ծավալուն և համառոտ** (ոչ ծավալուն):

Ծավալուն սահմանադրությունների օրինակ է ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Սահմանադրությունը (մոտ 50000 բառ), Հունաստանի, Պորտուգալիայի, Հնդկաստանի սահմանադրությունները:

---

1 Տես նույն տեղում:

Համառոտ սահմանադրության օրինակ է ԱՄՆ-ի Սահմանադրությունը (մոտ 5000 բառ), Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (մոտ 6500 բառ), Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և այլ երկրների սահմանադրությունները: Համառոտ Սահմանադրության օրինակ է: Համառոտ է նաև Լեռնահայաստանի Սահմանադրությունը:

Ծավալուն և համառոտ սահմանադրությունները, ըստ էության, միմյանցից տարբերվում են զուտ քանակական չափանիշներով, որը ոչնչով չի ազդում (ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով) դրանց որակական կողմի, մասնավորապես, դրանցում ամրագրված սկզբունքների և կարգավորվող հարաբերությունների կայունության վրա:

Կան երկրներ, որոնց չգրված սահմանադրությունը բաղկացած է մի քանի օրենսդրական ակտերից, որոնցից **բոլորն էլ սահմանադրական են** և հավասարապես ունեն բարձրագույն իրավաբանական ուժ: Շվեդիայի սահմանադրությունը բաղկացած է երեք նորմատիվ ակտերից: Նշված բոլոր ակտերն էլ ունեն միատեսակ սահմանադրական բնույթ:

Չգրված սահմանադրության **ուրույն տեսակ է Մեծ Բրիտանիայի Սահմանադրությունը:** Այն բաղկացած է 4 բաժիններից՝ **ստատուտներ, դատական նախադեպեր, սահմանադրական սովորույթներ և դոկտրինալ աղբյուրներ:**

Սահմանադրության (գրված) ձևի հետ սերտորեն առնչվում է դրա **կառուցվածքը:** Գրեթե բոլոր սահմանադրություններն ունեն միատեսակ կառուցվածքը՝ նախաբան (պրեամբուլա), հիմնական բովանդակություն, եզրափակիչ և անցումային դրույթներ:

Սահմանադրության գործառնությունները (ֆունկցիաները)

Սահմանադրությունը բարդ հասարակական երևույթ է, որը կարող է էական ազդեցություն ունենալ ինչպես երկրի կյանքի վերընթաց զարգացման, այնպես էլ զարգացումը խոչընդոտելու գործում: Այդ կապակցությամբ առաջնային կարևորության հարց է Լեռնահայաստանի գործառնությունների ճիշտ ընկալումը, քանզի սահմանադրության դերը հասարակության կյանքում ամենից առաջ դրսևորվում է դրա գործառնությունների մեջ: Դրանք բաժանվում են երեք խմբի՝ **իրավական (իրավաբանական), քաղաքական և գաղափարական (դաստիարակչական):**

Իրավական (իրավաբանական) գործառնությունն արտահայտվում է նրանում, ինչպես արդեն ասվել է, սահմանադրությունը այդ թվում նաև պետության իրավունքի համակարգի միջուկն է, որը սահմանում է հիմնարար իրավական դրույթներ, որոնք համարվում են ելակետային և որոշիչ իրավունքի առանձին ճյուղերի համար:

Քաղաքական գործառնությունն արտահայտվում է նրանում, որ հենց սահմանադրությամբ են ամրագրվում պետության կառուցվածքի ձևը, պետական մարմինների համակարգը, պետության քաղաքացիների, ինչպես նաև քաղաքական և այլ հասարակական միավորումների միջև փոխհարաբերությունների հիմունքները:

Գաղափարական (դաստիարակչական) գործառնությունը:

Սահմանադրական նորմերում բովանդակած կանոններն ու սկզբունքներն ունեն նաև լուրջ գաղափարական և դաստիարակչական նշանակություն՝:

Լեռնահայաստանի Սահմանադրության գործողությունը

Սահմանադրության **գործողությունը սովորաբար հասկացվում է մի քանի առումներով: Դրանք են.**

ա) սահմանադրության գործողությունը ժամանակի մեջ:

Սահմանադրությունը, որպես կանոն, ուժի մեջ է մտնում դրա եզրափակիչ կամ անցումային դրույթներում նշված պահից, ավելի հազվադեպ դրա կիրառման վերաբերյալ ընդունված օրենքում նշված պահից: Լեռնահայաստանի սահմանադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

բ) սահմանադրության գործողությունը տարածության վրա:

Սահմանադրությունը, որպես կանոն, ուժի մեջ է մտնում պետության ողջ տարածքի վրա:

գ) սահմանադրության նորմերի անմիջական գործողությունը:

Ժամանակակից սահմանադրություններն ընդլայնել են ոչ միայն իրենց կարգավորման առարկան, այլև սոցիալ-քաղաքական բովանդակությունը, դրանց նորմերի զգալի մասն ունի նորմ-ծրագիր, նորմսկզբունքների բնույթ, որոնք չեն առաջանում կոնկրետ իրավահարաբերություններ:

Դրա հետ մեկտեղ, սահմանադրություններում ամրագրված նորմերի մի մասի գործողության համար պահանջվում է օրենքի ընդունում: Դրանք, այսպես կոչված, հենվող բնույթ ունեցող նորմերն են, որոնց կիրառության համար նախատեսվող պայմանը բովանդակում է սահմանադրության հիման վրա ընդունվող օրենքի մեջ, Լեռնահասատանի պառլամենտ-խորհրդարանը ընդունելով սահմանադրությունը միևնույն ժամանակ մի շարք հարցերի կարգավորումը թողնում է լուծելու կառավարությանը:

Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը

Սահմանադրության ընդունումը:

Գոյություն ունի Սահմանադրության ընդունման մի քանի եղանակներ: Դրանք միմյանցից տարբերվում են մասնակիցների կազմով և ժողովրդավարության մակարդակով:

Դրանցից առավել նվազ ժողովրդավարական են, այսպես կոչված, **շնորհված սահմանադրությունները:**

Սահմանադրությունների ընդունման ավելի ժողովրդավարական (քան

նախորդը) եղանակ է ընտրվի Սահմանադիր ժողովի կողմից դրանց ընդունումը:

Սահմանադրության ընդունումը ինքնուրույն եղանակ է **խորհրդարանի կողմից** դրա ընդունումը: Այդպիսին էր նաև Լեռնահայաստանի սահմանադրությունը:

Տաթևի համազանգեզուրյան II համագումարը ընդունեց Լեռնահայաստանի Սահմանադրությունը, որն էլ հայտարարվեց որպես օրենսդիր (պառլամենտ-խորհրդարան) մարմին:

Սահմանադրության փոփոխումը:

Լեռնահայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը դասվում է ճկուն սահմանադրությունների շարքին, փոփոխություններ կատարվում են սովորական օրենքների ընդունման ձևով:

Լեռնահայաստանի Հանրապետության կառավարման ձևը

Կառավարման ձևը ունի հիմնարար նշանակություն պետության կազմակերպման և գործունեության սահմանադրաիրավական կարգավորման խնդրի ուսումնասիրման գործում: Դա այն բանալին է, որի օգնությամբ հնարավոր է բացահայտել համապատասխան պետության Սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության մարմինների այս կամ այն համակարգի իմաստը:

«Կառավարման ձև» հասկացությունն իր արտահայտությունն է գտել բազում երկրների հիմնական օրենքներում:

«Ռուսաստանի Դաշնությունը՝ Ռուսաստանը, հանրապետական կառավարման ձևի ժողովրդավարական դաշնային իրավական պետություն է» ասված է ՌԴ Սահմանադրության 1-ին հոդվածում:

Մասնագիտական գրականությունում տրվում է կառավարման ձևի սահմանումը, որն իր մեջ ընդգրկում է «պետության գլխի, իշխանության բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինների կազմակերպման, իրավական վիճակի և փոխհարաբերությունների համակարգը»[1]:

Հանրապետական կառավարման ձևը հանդես է գալիս 2 տարատեսակով՝ ա) նախագահական հանրապետության և բ) խորհրդարանական հանրապետության ձևով: Խորհրդարանական հանրապետության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում միայն խորհրդարանի առջև: Այստեղ անվստահության քվեի դեպքում կառավարությունը պարտավոր է հրաժարական տալ:

Լեռնահայաստանը կառավարման խորհրդարանական հանրապետության ձևի պետություն է:

---

1 Տես նույն տեղում, էջ 200:

Լեռնահայաստանի ընտրական համակարգը

Լեռնահայաստանի ընտրական համակարգը ընդգրկում է Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրված Լեռնահայաստանի բնակիչների կողմից անմիջականորեն համագումարը (պառլամենտ-խորհրդարան), պատգամավորների և տեղական մարմինների ընտրությունների կարգը: Ընտրությունների միջոցով է կազմակերպվել համագումարները (խորհրդարանը), տեղական մարմինները և այլն:

Խորհրդարանի, պառլամենտի կազմակերպման կարգը և կառուցվածքը

Ժամանակակից պետությունների ճնշող մեծամասնության սահմանադրություններով օրինաստեղծ գործունեությունը վերապահվում է ընտրովի ներկայացուցչական մարմիններին: Տարբեր երկրներում այդ մարմիններն ունեն տարբեր անվանումներ: Սակայն, քանի որ օրինաստեղծ գործունեությունը ներկայացուցչական մարմինների միակ գործունեությունը չէ, ուստի դրանց անվանման համար օգտագործվում է հավաքական «պառլամենտ» արտահայտությունը: Օրենքներ ընդունելուց բացի, նրա իրավասության ոլորտի մեջ են մտնում պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի որոշումը, հիմնարար ծրագրերի մշակումը և ընդունումը, բյուջեի հաստատումը և այլն[1]:

Լեռնահայաստանի Սահմանադրությունը բովանդակում է խորհրդարանի ձևավորման կապակցությամբ մի շարք սկզբունքներ, այդ թվում նաև կազմավորման կարգը և կառուցվածքը:

Պետական կառավարումը հանրապետության վարչատարածքային միավորումներում իրականացվում է Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով:

Լեռնահայաստանի կառավարության գործունեության կազմակերպումը, կառավարության կազմակերպման կարգն ու կառուցվածքը

Լեռնահայաստանի կառավարությունը իր գործունեությունը կազմակերպում է հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին համապատասխան: Սահմանադրական իրավունքի տեսության մեջ կառավարությունը բնութագրվում է որպես պետության վարչական (գործադիր և կարգադրիչ) գործունեությունը ղեկավարող ընդհանուր իրավասության կոլեգիալ մարմին:

Լեռնահայաստանի հանրապետության վարչական գործունեությունն իրականացնում է Լեռնահայաստանի կառավարությունը:

Սահմանադրության վերը նշված հոդվածները և դրույթները, ինչպես նաև հանրապետության մյուս նորմատիվ իրավական ակտերում կառավարու-

թյան վերաբերյալ ամրագրված հիմնադրույթները, բացահայտում են կառավարության իրավական բնույթը և դրա տեղն ու դերը ինչպես պետական իշխանության միասնական մարմինների, այնպես էլ գործադիր իշխանության մարմինների համակարգում:

Լեռնահայաստանի պետական տարածքը

Լեռնահայաստանի սահմանադրական կարգավիճակի կարևոր բնութագրիչներից է նրա տարածքը: Պետական տարածք ասելով հասկանում ենք հողագնդի այն հատվածը, որի վրա տարածվում է նրա իշխանությունը: Այն իր մեջ ընդգրկում է ինչպես ցամաքը, այնպես էլ նրա վրա բարձրացող օդի սյունը և ջրային տարածքները: Աշխարհի գրեթե բոլոր երկրների Սահմանադրություններն այս կամ այն ծավալով բովանդակում են պետության տարածքային կառուցվածքին վերաբերող նորմեր:

Լեռնահայաստանը տարածքային կառուցվածքի առումով ունիտար պետություն է, որովհետև նրա տարածքը բաժանված է միայն վարչական միավորների: Նրա հիմնական օրենքում ուղղակի նշվում է տարածքների մասին, որին մենք անդրադարձել ենք:

Լեռնահայաստանի պետական խորհրդանիշները

Լեռնահայաստանի սահմանադրական կարգավիճակը բնութագրվում է նաև նրա խորհրդանիշներով, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր ինքնիշխան պետության անօտարելի պաշտոնական խորհրդանիշները: Դրանք են՝ զինանշանը, դրոշը, օրհներգը և մայրաքաղաքը: Ինչպես տեսնում ենք, Սյունիքի սահմանադրությունը շատ հստակ անդրադարձել է նաև այդ հարցին:



Գորիս

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ



Դավիթ-Բեկի պայքարը XVIII-XX հայ ազատագրական շարժումների շղթայի առաջին նշանավոր օղակի պատմությունն է, որի հետ սերտորեն կապվում են Նժդեհյան ազատագրական կռիվները և արցախյան անկախության նվաճման արդի շարժումները:

Դավիթ-Բեկի ու Նժդեհի ազգային պատգամների ու քաջարի գործողությունների օրինակներով են մղվել ներկայիս արցախյան ազատամարտերը, որոնք հայոց պատմության մեծ տարեգրության անմահ դրվագներից են:

Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ Արցախի պատմությանն ու հիմնահարցին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմանը, այնքանով, որքանով այն առընչվում է մեր ուսումնասիրության թեմային:

Մեկ անգամ չէ, որ հայ ժողովուրդը, այդ թվում և արցախցիներն ու ուտիքցիները, ըմբոստացել են օտար նվաճողների՝ պարսկա-թուրքական բռնակալությունների դեմ: Վավերագրերը պատմում են, որ 821-822 թվականներին Պարտավից արաբական ուժերը ներխուժել են Վարանդա, գերի վերցրել հազար հայ և ամրացել Շինկաքար (Շուշի) բերդում: Լուսադեմին Սահլի Ամբատյան Եռանշահիկները զորքով հարձակվել են, նոտորել բոլոր արաբներին և ազատել հայ գերիներին:

Սկսած 10-րդ դարից, Արցախը և Ուտիքը պատմական աղբյուրներում հանդես են գալիս Խաչենի իշխանություն անվանումով, որի պատմությունը հանգամանորեն շարադրված է Բագրատ Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում» ծավալուն ուսումնասիրության մեջ:

Երբ հեռվում, Միջերկրականի ափին, ռայկական թագավորության դռղանջներն էին մարվում՝, այստեղ, Արցախ-Ուտիքում վեր էր բարձրանում Խաչենի հայոց իշխանությունը, որը հետագայում բազում փառավոր էջեր գրեց հայոց պատմության մագաղաթում[2]:

Միջնադարում Խաչեն էր անվանվում այն տարածքը, որը ներկայումս ընդգրկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Ասենք, որ Խաչենի իշխանության տարածքը միշտ էլ ենթարկվում էր փոփոխությունների[3]:

17-րդ դարում Արցախի տարածքում, պարսկական պետության կողմից ձևավորվել է հինգ մելիքություններ՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի, որոնք ունեին իրենց զինանշանը ու դրոշը: Այդ հինգ մելիքությունները միասին պարսկերեն անվանվում էին Խամսե (հինգ)[4]:

Թուրքիայի դեմ վարած չորս պատերազմներում Ղարաբաղի մելիքների ցուցաբերած ակտիվ մասնակցության համար Շահ-Աբասը 1603 թվականին հաստատեց նրանց իշխանական իրավունքները: Իսկ Նադիր Շահը (1736-1747 թթ.) Թուրքիայի դեմ պատերազմին մասնակցելու համար Զրաբերդի մելիք Իսրայելին շնորհեց սուլթանի, իսկ Դիզակի մելիք Ավանին՝ խանի և մելիքների ավագի տիտղոսներ:

Մելիքներն ունեին իրենց ամրոցները և սեփական զինված ուժերը, հանդիսանում էին իրենց տարածքների միանձնյա կառավարիչները: Ղարաբաղի հինգ մելիքությունների միջև գոյություն ուներ սերտ միություն և նրանք ներկայացնում էին լուրջ ուժ, որի հետ հաշվի էին նստում ոչ միայն հարևանները, այլև՝ պարսկական մի շահ:

Արցախ-Ղարաբաղի պատմության մեջ նոր ու կարևոր էջ բացվեց 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի առաջին քառորդում, երբ արցախցիների և սյունեցիների ինքնապաշտպանությունը վերածվեց ազգային-ազատագրական լայն շարժման: Այդ պայքարը կազմակերպելու գործում անգնահատելի դեր ունեցան Իսրայել Օրին, Եսայի Հասան-Ջալալյանցը, Իվան Կարապետը, Դավիթ-Բեկը, Ավան հարյուրապետը, Մխիթար Սպարապետը և ուրիշներ: Ղարաբաղի և Սյունիքի համատեղ ապստամբությունը, որը ղեկավարում էր Դավիթ-Բեկը, իսկ նրա մահից հետո՝ Մխիթար Սպարապետը, հերոսությամբ և խիզախությամբ լի էջեր են: Թե ինչո՞ւ հենց Ղարաբաղի լեռներում ծնվեց և գլուխ բարձրացավ հայրենիքի ազատագրության գործը, Լեռն այսպես է բացատրում, «չէր կարող ոչ ծնվել, ոչ էլ սնվել այնպիսի մի տեղ, ուր չկար հայ ազնվականություն, իբրև ազգային իշխանության կազմակերպված ուժ և իբրև ռազմիկ տարրերի առաջնորդ: Ղարաբաղն էլ կարող էր դառնալ հայոց ազատագրության պատմության օրորոց: Ինչպես միշտ, անցյալում, ազնվականությունն ու հոգևորականությունն էին իրենց ձեռքն առնում շարժումը, և ժողովուրդը հետևում էր նրանց»[5]:

1736 թ. գարնանամուտին Մուղանի դաշտում Թահմազ-Կուլի խանը թագադրվեց որպես Պարսկաստանի շահ Նադիր: Հայոց Աբրահամ Կրետացի կաթողիկոսը օրհնեց նրա սուրը և իր ձեռքով կապեց պարսից նոր շահի մեջքին և թագադրեց Նադիրին, որպես շահն-շահ Իրանի: Պատվավոր տեղ էր գրավում Արցախի Դիզակի Մելիք Ավանը (Եգան), որին շահը «բաբալղ» (հայրացու) էր անվանում: Հենց Նադիրի մտահղացմամբ էր, որ ղարաբաղցիները 1733 թ. Մեծ պասի առաջին գիշերը կոտորեցին Ղարաբաղի և Գանձակի կողմերում գտնվող օսմանյան բոլոր զորքերին: Այդ ամենի համար, գրում է ռուս պատմաբան Բոտկովը:

Հաշվի առնելով հայ իշխանական տարրի հակաթուրքական կեցվածքը՝ Նադիր շահը «հայերին ազատում էր զանազան խաների միջնորդական իշխանություններից, ճանաչում էր մելիքներին իբրև բնիկ իշխողներ»[5]:

Ղարաբաղի մելիքները՝ կախում ունենալով միայն Նադիր շահից, իրենց իշխանության մեջ վայելում էին «ինքնավարության կատարյալ իրավունքներ, որպես վալիներ նրանք ավելի հանգիստ և ապահով դրություն ստացան և սկսեցին ավելի զորացնել իրենց ուժերը»[7]:

Այս իրավիճակը պահպանվեց մինչև XIX դար, երբ Արցախը և Սյունիքը միացվեցին Ռուսական կայսրությանը:

Ինչպես հայտնի է, 19-րդ դարի սկզբից Անդրկովկասում ռուսական տիրապետության ժամանակաշրջանում Անդրկովկասը բաժանված էր նահանգների, գրեթե առանց հաշվի առնելու ազգային հատկանիշը: Արցախը և Ուտիքը տարանջատվել էին տարբեր նահանգների ու ուեզդների մեջ:

Հետագայում Արցախյան տանջահարված խնդիրը զոհասեղան բերեց բոլշևիկների Անդրկովկասյան կամ Կավբյուրոյի նիստում: Առաջին նիստում՝ հուլիսի 4-ին որոշվեց Արցախը միացնել Հայաստանին: Սակայն «եղբայր» Ադրբեջանը հայտարարեց, որ որոշման կենսագործման դեպքում կառավարությունը հրաժարական կտա, և կվարկաբեկվեն խորհրդային կարգերը: 1921 թ. հուլիսի 5-ին, նույն մարմնի երկրորդ նիստում, Ստալինի պարտադրանքով Արցախը բռնակցվեց Ադրբեջանին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը

1988-91 թթ. Հայաստանի իշխանությունները ի սկզբանե փորձում էին ղարաբաղյան հակամարտությունը կարգավորել խաղաղ բանակցությունների ճանապարհով, խորհրդային օրենսդրության շրջանակներում: Սակայն փորձերն ապարդյուն անցան:

Ադրբեջանի իշխանությունները փորձում էին ուժի դիրքերից լուծել այդ հարցը և մշտապես ռմբակոծում էին Արցախի բնակավայրերը, հատկապես մայրաքաղաք Ստեփանակերտը և Հայաստանի սահմանամերձ գոտին՝ փորձելով նրան ներքաշել պատերազմի մեջ:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային և Շահումյանի շրջանային ժողովրդական պատգամավորների խորհուրդների Ստեփանակերտում կայացած համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

1991 թ. ծանր վիճակ ստեղծվեց Ստեփանակերտի համար, որն անընդհատ հրետակոծվում էր Խոջալուի, Շուշիի, Աղդամի ռազմական հենակետերից: ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերը 1992 թ. ձմռանը լայնածավալ հարձակման անցան: Բնակչության անվտանգությունն ապահովելու ուրիշ ելք չկար: Փետրվարի վերջերին հայ ազատամարտիկներին հաջողվեց ոչնչացնել Խոջալուի ռազմական խմբավորումը՝ գրավելով մեծ քանակությամբ ռազմամթերք: Հաջողություններով ոգևորված հայկական զորամիավորումները ծրագրեցին ազատագրել հայոց հինավուրց Շուշի քաղաքը, որի տարածքը ադրբեջանցիները դարձրել էին խոշոր ռազմական հենակետ և բարձունքից շուրջ երկու տարի անընդհատ ռմբակոծվում էին Ստեփանակերտը: Ուսումնասիրելով հակառակորդի տեղաբաշխումն ու դասավորությունը և

կազմելով հարձակման համակողմանի պլան 1992 թ. մայիսի սկզբներին Արցախի ազատամարտիկները Սերժ Սարգսյանի հրամանատարությամբ հարձակվեցին Շուշիի ուղղությամբ:

Մայիսի 9-ին ազատագրվեց Շուշին: Դա Արցախի ազատագրական պայքարի փառավոր էջերից էր:

Իսկ 1992 թ. հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը, հաշվի առնելով ԼՂՀ Անկախության հանրաքվեի արդյունքները, Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

1993 թ. գարնանը Արցախի ազատամարտիկները ծեռնամուխ եղան ադրբեջանցիների կողմից զավթված հայկական տարածքների ազատագրմանը: Սեղմ ժամկետում ազատագրվեց Մարտունու շրջանի մեծ մասը, ոչնչացվեցին թշնամու խոշոր հենակետերը Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլու, Կուբաթլիի, Ջեբրայելի և Զանգելանի շրջաններում: Դա Արցախյան ազատագրական պայքարի հաղթական երթն էր: Ադրբեջանական զավթիչներն առաջին անգամ զգացին հայ զինուժի ողջ հզորությունը:

Չկարողանալով ռազմաճակատի որևէ հատվածում հաջողության հասնել և համոզվելով, որ ուժով անհնար է լուծել արցախյան հիմնահարցը, նաև վախենալով ազատամարտիկների նոր առաջխաղացումից, Ադրբեջանը, հարկադրված, 1994 թ. մայիսին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի աջակցությամբ Բիշքեկում զինադադար կնքեց: Արցախի հերոսական ժողովուրդը մեկընդմիշտ լուծեց իր ազատագրման հարցը:

*

* *

Գարեգին Նժդեհի բարձրագույն ցանկությունը Սյունիքի միացումն էր ազատ և անկախ Հայաստանին, որպիսին չէր, սակայն, խորհրդայինը: Նրա երազած անկախ հայկական պետությունն այսօր իրականություն է: Նժդեհը ձգտում էր նաև «վիճելի» Ղարաբաղի ու Նախիջևանի միավորումը Մայր Հայրենիքին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը ևս Նժդեհի մարգարեության մարմնավորումն է: Դավիթբեկյան, Նժդեհյան և Արցախյան շարժումները Հայոց ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ միևնույն ոսկե շղթայի օղակներն են: Երեքն էլ պսակվել են փառավոր հաղթանակներով:

Երեքն էլ ստեղծեցին այս կամ այն տիպի գծերով ինքնուրույն ազգային պետություն:

Դավիթբեկյան իշխանությունը ընդհատվեց, երբ այդ իշխանության ստեղծողը անակնկալ, դեռևս երիտասարդ վախճանվեց:

Իսկ Նժդեհյան իշխանության վախճանը որոշվեց փետրվարյան ապստամբության պարտությամբ:

Այս երկու շարժումների ժամանակ էլ հայությունը միասնական չէր:

Դավիթբեկյան ազատագրական կռիվների ժամանակ հաճախ Դավիթ-Բե-

կը ստիպված էր կռվել ապստամբների և ազգադավ մելիքների դեմ, իսկ Նժդեհը գանգատվում էր, թե իր դեմ հայերին են բերում, իսկ ինքը չի կարողանում կրակել նրանց վրա:

Արցախյան շարժումը հավանաբար միակն էր, որի ժամանակ ոչ մի հայ զենք չվերցրեց իր ազգի դեմ:

Արցախյան գոյամարտը XX դարերում մղած հայ ազատագրական պայքարի ամենահաջող դրվագներից է, որը պսակվել է կատարյալ և փառավոր հաղթանակով:



ԼՂՀ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Ամփոփում

Հայոց Սյունիքն ու Արցախը՝ Մեծ Հայքի այդ երկու խոշոր մարզերը կամ, ինչպես «Աշխարհացույց»-ում է նշվում՝ «աշխարհները», եղել և այսօր էլ մնում են մեր երկրի արևելյան անառիկ պատնեշները: Թեպետ այդ երկու «աշխարհներն» էլ իրենց պատմական տարածքների զգալի հատված կորցրել են քչվոր թուրք-թաթարական ցեղերի դեմ մղած հարյուրամյակներ ընդգրկող պայքարում, սակայն ոչ միայն պահպանել են իրենց տարածքների զգալի մասը, այլև հանդիսացել հայ ազգային-ազատագրական շարժման կենտրոններ: Եթե մենք ցավով միայն կարող ենք նշել, որ հայկական Նախիջևանը չդիմացավ քչվոր ելուզակների ճնշմանը և այսօր գտնվում է «Ադրբեջան» պետության «հովանավորության» տակ, ապա հպարտությամբ կարող ենք ասել, որ Սյունիքն ու Արցախը իրենց անընկճելի ոգու շնորհիվ դիմացան և միշտ էլ կմնան որպես հայ ազատագրական շարժման, հայկական պետականության ամրապնդման, մեր ազգային պատմական տարածքների ազատագրման ու **ամբողջացման** անխախտելի հիմքը: Այդպես էին նրանք XVIII դարում, Դավիթ-Բեկի և Մխիթար Սպարապետի գլխավորած պայքարի ընթացքում, այդպես էին XX դարի սկզբին, 80-ական թվականների վերջերին, 90-ական թվականներին և այդպիսին են այսօր:

1918-20-ական թվականներին ևս Սյունիքի և Արցախ-Ղարաբաղի ժողովուրդը ոտքի կանգնեց պաշտպանելու իր անկախությունը, ազգային դեմքը՝ պանթուրքական, պանիսլամական գաղափարախոսական պատրանքներով տարված թուրք-«ադրբեջանական» ագրեսորներից:

Լեռնահայաստանի և Ինքնավար Սյունիքի այդ շրջանում մղած պայքարը հայ ազատագրական շարժման հերոսական դրվագներից է: Այն վերստին համոզում է մեզ, որ ինչպիսի հզոր բարեկամներ էլ որ ունենա երկիրը, այնուամենայնիվ, պետք է վճռական դեր հատկացնի իր իսկ **սեփական ուժերին,** ներքին միաբանությանը՝ հատկապես օտար նվաճողների դեմ պայքարում: XX դարի վերջերին սկսված ազատագրական պայքարի շնորհիվ ազատագրվեցին և այսօր էլ հայկական ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ է գտնվում Սյունիքի և Արցախի բնիկ հայկական ազգային պատմական տարածքների զգալի մասը: Նախկին ԼՂԻՄ-ի տարածքը «ադրբեջանական» Կուբաթլին՝ պատմական Հաբանդի՝ Գորիսի տարածք, Լաչինը՝ պատմական հայկական Աղահեճքը (Քաշաթաղը), Կովսականը («ադրբեջանական» Զանգելանը) և այլն: Այդ համեստ արդյունքները ձեռք բերվեցին ոչ միայն մեր հերոսների արյան, այլև ամբողջ ժողովրդի, նրա մեծամասնության կրած սոցիալ-տնտեսական բազմաթիվ ծանր հարվածների, զրկանքների, կորուստների գնով: Ուստի, ձեռք բերածի պահպանումն այլընտրանք չունի:

Լեռնահայաստանի և Ինքնավար Սյունիքի մղած պայքարը ոչ միայն պահպանեց այդ բուն հայկական երկրամասը, այլև էապես նպաստեց Արցախ-Ղարաբաղի պահպանմանը՝ այսօրվա ԼՂՀ-ի ստեղծմանն ու գոյատևմանը: Ճիշտ կողմնորոշվելով միջազգային բարդ իրողությունների մեջ, լավ հասկանալով իր բոլոր բարեկամներին և թշնամիներին, Սյունիք-Զանգեզուրի ժողովուրդը՝ Նժդեհի և մեր մյուս հերոսների գլխավորած հերոսական պայքարով ոչ միայն փրկեց ինքն իրեն ու Մեծ Հայքի 1/10 մասը կազմող Հայաստանի Հանրապետությունը, այլև պատնեշեց պանթուրքիզմի ճանապարհը, նրա՝ հեռուն գնացող հանցավոր ծրագրերը: Այս առումով ևս Սյունիքի և Արցախի առջև դրված խնդիրն այսօր էլ չի փոխվել... Ուստի, մեր նորանկախ պետությունն այսօր առավել ևս, քան երբևէ, պետք է **հատուկ** ուշադրություն դարձնի այդ երկրամասի՝ Սյունիքի և Արցախի, բնականաբար նաև՝ **ազատագրված** հարակից հայկական տարածքների էթնիկական, սոցիալ-տնտեսական աճի, զարգացման գործին: Ուշագրավ է նաև Լեռնահայաստանի, Ինքնավար Սյունիքի **պետական կազմակերպության ստեղծման ու գործունեության փորձը:** Պետական այդ միավորի առանձնահատկությունը հենց նրանում էր, որ սահմանված ժողովրդավարական համակարգը հնարավորություն տվեց ստեղծելու **պետության ու ժողովրդի** միասնություն. կոլեկտիվ կառավարում, որը էապես նպաստեց այդ երկրամասի ժողովրդի մղած արդյունավետ պայքարին:



ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեռնահայաստանի հանրապետությունը. Սյունիքի սահմանադրությունը

1. Խրոպանյուկ, Պետության և իրավունքի տեսություն, Երևան. 1997 թ., էջ 83:
2. Ռ. Համբարձումյան, «Վարք Նժդեհի», Երևան, 2001 թ., էջ 7:
3. Նույն տեղում:
4. Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, Սյունիքի պատմություն, Երևան, «Հրազդան», 2001 թ., էջ 230:
5. Ա. Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ), Երևան, 2000 թ., էջ 667:
6. Նույն տեղում. էջ 668:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՉԱԿՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը..., էջ 133-134: Ծ. Աղայան, Անդրանիկ, ՀԲՀ հրատարակչություն, Երևան, 1994 թ., էջ 725:
2. Նժդեհ, էջեր իմ օրագրեն, Երևան, «Ոսկան Երևանցի», 2002 թ., էջ 6:
3. Բաբալեան, էջեր Հայաստանի անկախության պատմութիւնից, Գահիրէ, 1959 թ., էջ 38:
4. Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, նշված աշխատությունը, էջ 206:
5. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1998 թ., էջ 351:
6. Պետական և հասարակական հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պետական գործածության պաշտոնական լեզու:

Փոխնախագահ պառլամենտի Լևոն Շանթ

Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու, 1919 թ., թիվ 10, էջ 79:

7. «Ազգայնացման հարցի շուրջը» հոդվածում անդրադառնալով այս հարցին, թերթը նշում է, որ մի շարք անհատների համար անսպասելի էր գեներալ-կոմիսարի այսօրինակ հրամանը. որով Զանգեզուրի բոլոր հիմնարկներում 1920 թվականի հունվարի 1-ից մտցվում է հայոց լեզուն որպես պետական լեզու: «Ինչպես կարելի է... հայերեն իմացողները շատ քիչ են, (ասում են այդ մի քանի հոգին, որ մի քանի տարում պետք է գլուխ բերել այդ գործը)... դրանք թեորետիկ «ինտելիգենցիայի» մի մաս կազմող հայերն են, որոնք ասում են, թե ոնց կարելի է, դեռ մենք Ռուսաստանի մասն ենք, բայց մոռանում են. որ վրացիները վաղուց են արդեն հնչեցրել վրացերենն իրենց երկրում», «Սյունիք», 1920 թ., թիվ 4:

8. «Սյունիք», թիվ 14:
9. Քաղաքացիական կռիվների պատմություն, ժողովածու առաջին, նյութեր և փաստաթղթեր, կազմ. Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյան, Պետհրատ, 1932 թ., փ. 111, էջ 193:
10. «Սյունիք» 1920 թ., թիվ 4:
11. Առայժմ մեր խնդրի մեջ չի մտնում 1918-1919 թթ. իրադարձությունների քննարկումը, երբ, նախ Հայաստանի նշանակած Զանգեզուր-Ղարաբաղի կառավարիչ Արսեն Շահմազյանի, ապա Անդրանիկի գործունեության արդյունքում Զանգեզուրը զերծ մնաց Ադրբեջանի ոտնձգություններից:
12. «Սյունիք» թիվ 2, հունվարի 8:
13. Խոսքը օղու վրա դրված ակցիզային հարկը ավելացնելու և դրա հետ կապված խնդիրների մասին է, տես «Սյունիք», թիվ 5:
14. «Սյունիք» թիվ 8, 25-ը մարտի:
15. Այստեղ գործում էր տեղական սպառողական ընկերություն (Կարճևանում կար սպառողական ընկերություն, Գենվազում, Մեղրիում սպառկոոպի խանութներ, որոնք վերսկսել էին գործել 1919 թ. դեկտեմբերից. ունեին շուրջ 240 անդամ, «Սյունիք», 23 մայիսի:
16. Գ. Գրիգորյան «Սյունիքի պատմություն», էջ 205-206:
17. Հր. Սիմոնյան «Անդրանիկի ժամանակը», Երևան:
18. ՀՀ ՊԿՊԱ Ֆ 370 g.1. գ.33, թ.4:
19. ՀՀ ՊԿՊԱ Ֆ 370, g.1, գ.53, թ.10-11:
20. Նույն տեղում:
21. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 370, g.1, գ.56, թ.7-9 շրջ:
22. Նույն տեղում, թ.9:
23. ՊԿԱՊ, Ֆ 370, g.1, գ.56, թ.6 և շրջ.:
24. Նույն տեղում, թ.5:
25. Նույն տեղում, թ.11:
26. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 370, g.1, գ.34, թ.24:
27. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 370, g.1, գ.34, թ.40 և շրջ.:
28. Նույն տեղում, թ.5 և շրջ.:
29. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 323, g.1, գ.1, թ.21:
30. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 370, g.1, գ.34, թ.41 և շրջ.:
31. ՀՀ ՊԿՊԱ. Ֆ 200. g.1, գ.563, թ.209:
32. Վ.Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921 թթ.): Երևան, 1991 թ., էջ 123:
33. ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (ՆՊԿՊԱ). Ֆ 113, g.3, գ.7, թ.25:
34. Վլ. Ղազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում. Երևան. 2001 թ.. էջ 5:
35. Նույն տեղում:
36. Նույն տեղում:
37. Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 113-116:

38. Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), 1978 թ., թիվ 1, էջ 61: Վ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 6:
39. Նշված աշխատությունը, էջ 123:

ՍՅՈՒՆԻՔԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1. Համազանգեզուրյան համագումարի և ինքնավար Սյունիքի կազմավորման մասին, ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 113, g.1, գ.30, թ.25, գ.37, թ.98, 129:
2. «Նժդեհ, Կյանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 165-166:
3. Նույն տեղում, էջ 166: ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 113, g.3, գ.37, թ.127-128, նաև «Ազատ Սիւնիք», էջ 58, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 626-627 (հավելված):
4. ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 114, g.2, գ.70, թ.11: Վլ. Ղազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում, Երևան. 2001 թ., էջ 7-8:
5. «Ազատ Սյունիք, Սև էջեր և փաստեր բոլշևիկների հնգամսյա գործունեությունից», Գորիս, 1921 թ.:
6. Վլ. Ղազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում, Երևան, 2001 թ., էջ 87:
7. Գարեգին Նժդեհ, Իմ պատասխանը, էջ 42, «Ազատ Սիւնիք», էջ 44, ՀՀ, ՆՊԿՊԱ, Ֆ 113, g.3, գ.37, թ.120 շրջերես:
8. ՀՀ, ՆՊԿՊԱ, Ֆ 113, g.3, գ.37, թ.121 և շրջերես, նաև «Ազատ Սիւնիք», էջ 45-46, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 620-621: Ա. Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը. (1920-1921 թթ.), Երևան, 2000 թ., էջ 373:
9. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 373:
10. Համազանգեզուրյան 1-ին համագումարի արձանագրություն:
11. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 373:
12. ՀՀ ՆՊԿՊԱ. Ֆ 114, g.2, գ.70, թ.11, շրջ., նաև Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն. էջ 628, «Ազատ Սիւնիք», էջ 46-50: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 375, Վ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 8:
13. Գ. Նժդեհ, Ինչու պայքարեց Լեռնահայաստանը: «Հայրենիք», 1923թ., թիվ 8, էջ 80:
14. Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք: «Հայրենիք», 1925 թ., թիվ 7, էջ 135:
15. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 376:
16. Համազանգեզուրյան առաջին համագումարի որոշումներն ու բանաձևերը, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993 թ., էջ 658-667:
18. ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 89-90:
19. Վլ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 12:
20. Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 10, էջ 138-139:
21. ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 114, g.2, գ.89, թ.12:
22. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը. էջ 473:
23. Գ. Նժդեհ, Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932 թ., էջ 32:

24. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 178, g1. գ.73, թ.11: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 474:
25. Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, Դէպքեր, դեմքեր, ապրումներ, Զ հատոր, էջ 178: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 475:
26. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 476:
27. Հ ՊԿՊԱ, Ֆ 198, g.1, գ.73, թ.11 և շրջ.:
28. Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դեմքեր, ապրումներ, Զ հատոր, էջ 233:
29. Նույն տեղում, էջ 234: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 476:
30. Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դեմքեր, ապրումներ, Զ հատոր, էջ 235:
31. Գ. Նժդեհ, Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք» ամսագիր, 1923, հունիս, թիվ 8, էջ 80: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 477:
32. Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925 թ., թիվ 10, էջ 138:
33. Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 161-162:
34. Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը (ըստ նորահայտ վավերաթղթերի), Երևան, 2001 թ., էջ 106-108:
35. Նույն տեղում, էջ 35-36:
36. Նույն տեղում. էջ 66:
37. Վլ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 32:
38. Նույն տեղում:
39. Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը (ըստ նորահայտ վավերաթղթերի), Երևան, 2001 թ., էջ 64:
40. Նույն տեղում, էջ 90:
41. Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 11, էջ 88:
42. Նույն տեղում:
43. Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001 թ., էջ 152-153: Վլ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 34-35:
44. Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք, Պեյրութ, 1999 թ., էջ 137:
45. Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 163:
46.Ա. Սիմոնյան, Ռազմական պատմություն, էջ 78: Ռ. Համբարձումյան. Վարք Նժդեհի. Երևան, 2001 թ., էջ 70:
47. Վ. Գևորգյան. նշված աշխատությունը, էջ 173-174: Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք, 1999 թ., էջ 160, 166-167:
48. «Հայրենիք». 1923 թ.. թիվ 8, էջ 78-82:
49. Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը: Երևան, 2001 թ., էջ 46-81, նաև 82-91:
50. Հովհ. Քաջազնունի, Հ3 Դաշնակցությունը անելիք չունի այլևս. Թիֆլիս, 1923 թ., էջ 53:
51. Գ. Նժդեհ. Հատընտիր. Երևան, 2001 թ.. էջ 236:
52. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը. էջ 666-667:

53. Խրոպանյուկ Վ. Ն., նշված աշխատությունը, էջ 83:
54. Шершеневич Г. Ф., Общая теория права. М., 1991. с. 98., Кокошкин Ф. Ф., Лекции по общему государственное право. М., 1912. с.. 181-190
55.ՀՀ ՊԿՊԱ. Ֆ 113, g.3, գ.37, թ.112:
56.Նույն տեղում, թ.129:
57. Նույն տեղում, թ.130:
58. Նույն տեղում, թ.132:
59. Խրոպանյուկ Ն. Վ., նշված աշխատությունը, էջ 167-173:
60. 54. Шершеневич Г. Ф., Общая теория права. М., 1991. с.. 106: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 666:
61. Մ. Զիլֆուղարյան, Սյունիքի սահմանադրությունը, Երևան, 2008 թ. ԳՊՀ հրատարակչություն, էջ 45:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ

1. Խոսքը Կիլիկյան Հայաստանի մասին է (Ս. Խ.):
2. XIV դարից Խաչենը կոչվեց Ղարաբաղ:
3. Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչեն..., էջ 55, նաև Կրթությունը և գիտությունը Արցախում, պարբերական, 2002 թ., համար 1-2, էջ 16:
4. Նույն տեղում, էջ 18:
5. Լեո, Երկեր..., հ. 3, գիրք 2, էջ 27:
6. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները (1600-1827), Երկերի ժողովածու, հ. 9, Երևան 1987 թ., էջ 444:
7. Նույն տեղում, էջ 443:
8. Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, նշված աշխատությունը, էջ 226:
9. Նույն տեղում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Լեռնահայաստանի հայկական պետությունը և Սյունիքի սահմանադրությունը 4
Սյունիքի Հանրապետության պետականության խորհրդանիշները 9
Սյունյաց նախարարության նահապետները (աշխարհակալները). թագավորները, գահերեց իշխանները, վարչապետները 10
Հայաստանի հարավային դարպաս 12
Սյունիքի մարզ 13

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՉԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ
Իրավիճակը Զանգեզուրում 1918-20 թթ. 14

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ XX ԴԱՐ
Սյունիքի ինքնավարության հռչակումը 21
Տաթևի համազանգեզուրյան I համագումարը 23
Համակարգի օրակարգը 24
Կառավարության ձևի գլխավոր գծերը 27
Վարչատերիտորիալ բաժանումը 28
Կառավարության (դիվանի) ընտրությունը, Սյունյաց Սպարապետի հրավիրումը 28
Սպարապետի օծումը Գորիսի Սբ Գ. Լուսավորիչ եկեղեցում 30
Սյունիքի պառլամենտը 31

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ 33
Օրակարգ 33
Պարենավորման հարցը 34
Կառավարության կազմը 36
Լեռնահայաստանի անկումը, պատմական նշանակությունը և դասերը 38
Լեռնահայաստանի հայկական պետության բնորոշ հատկանիշները 42

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ «ԻՆՔՆԱՎԱՐ ՍՅՈՒՆԻՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԵՐԸ» 45
Սահմանադրության հասկացությունը 45
Լեռնահայաստանի Սահմանադրության իրավաբանական բնույթը 47
Լեռնահայաստանի Սահմանադրության էությունը 47
Սահմանադրության տեսակը և ձևը 49
Սահմանադրության գործառնությունները (ֆունկցիաները) 52
Լեռնահայաստանի Սահմանադրության գործողությունը 52
Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը 53
Լեռնահայաստանի Հանրապետության կառավարման ձևը 54
Լեռնահայաստանի ընտրական համակարգը 54
Խորհրդարանի, պառլամենտի կազմակերպման
կարգը և կառուցվածքը 54
Լեռնահայաստանի կառավարության գործունեության կազմակերպումը
կառավարության կազմակերպման կարգն ու կառուցվածքը 55
Լեռնահայաստանի պետական տարածքը 55
Լեռնահայաստանի պետական խորհրդանիշները 56

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ 57
Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակումը 59
Ամփոփում 62
Ծանոթագրություն 64

ՄԱՐՏԻՆ ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՏՆՕՐԵՆ՝ **ՆԱՐԻՆԵ ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ**

Համակար·չային շարվածքը և ձևավորումը՝ **Քրիստինե Իսկանդարյանի և Արփինե Գուլոյանի**
Վերստու·ող սրբա·րիչ՝ **Զարուհի Մխիկյան**
Տեխնիկական խմբա·իր՝ **Արմեն Զիլֆուղարյան**

Ստորագրված է տպագրության 02.04.2008 թ.: Ծավալը՝ 4.5 մամուլ:
Չափը՝60-84 1/16: Թուղթը՝օֆսեթ - 1: Տպագրությունը՝օֆսեթ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրվել է «Գրիգոր Տաթևացի» ՍՊԸ տպարանում

ԳՊՀ հրատարակչություն
Գորիս 2008